ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ — 2
I. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ — 3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ — 3
1.1 ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 2022 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ — 4
1.2 ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՏԱԳՐԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ — 5
2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2022 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ — 5
3. 2022 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ ԵՎ ԸՍՏ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԵՐԻ — 6
3.1. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՄԱՍՆԱԿՑԱԾՆԵՐԻ — 6
3.2. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ — 10
3.3. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ — 12
3.4. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ — 16
4. ԹԵՍՏԵՐ ԵՎ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ — 17
II. ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ — 18
5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ — 18
5.1 ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԸՍՏ ԲՈՒՀԵՐԻ ԵՎ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ (ՆԱԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ) — 20
5.3 ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՏՈԿՈՍՈՎ ԱՌԱՆՁՆԱՑԱԾ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ — 25
5.4 ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԵՎ ԲԱՐՁՐԼԵՌՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԵՐԻՑ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ԱՌԱՆՁՆԱՑԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԸ — 29
5.5 ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ — 30
5.6 ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ — 31
ԱՄՓՈՓՈՒՄ — 35
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ — 37
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ — 38
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ — 38
ՀԱՎԵԼՎԱԾ 2. 2022 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ — 39
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ — 39
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ — 40
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ 2007-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ — 41

ՆԱԽԱԲԱՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնի իրականացրած սույն վերլուծությամբ ներկայացվում են 2022 թ. հունիս-հուլիս ամիսներին անցկացված միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքները: Այն նախատեսված է հանրակրթության ոլորտի մասնագետների և կրթության խնդիրներով հետաքրքրվող անհատների լայն շրջանակի համար:

Միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների ամփոփիչ վերլուծությունն ամեն տարի իրականացվում է մի քանի ուղղություններով.

- վերլուծվում են միասնական քննությունների ընդհանուր արդյունքները և համեմատվում նախորդ տարիների քննությունների արդյունքների հետ,
- հետազոտվում են առարկայական թեստերը և թեստային առաջադրանքներն ըստ կառուցվածքի և որակական բնութագրիչների: Թեստերը բարելավելու նպատակով վերլուծության այդ մասը տրամադրվում է առարկայական մասնագետներին,
- վերլուծության են ենթարկվում միասնական քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների, բնակավայրերի տիպերի (քաղաք, գյուղ), հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի և դիմորդների սեռերի,
- վերլուծության են ենթարկվում բուհերի ընդունելության մրցույթի արդյունքները, ներկայացվում են ամենապահանջված մասնագիտությունների վերաբերյալ տեղեկություններ,
- առանձին անդրադարձ է կատարվում սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերի դիմորդների հանձնած միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքներին,
- մատնանշվում են նաև բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսներով աչքի ընկած հանրակրթական ուսումնական հաստատությունները,
- Երևանի քաղաքապետին և մարզպետներին են տրամադրվում վիճակագրական տվյալներ միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի մասին՝ յուրաքանչյուր վարչատարածքային միավորի վերաբերյալ:

Վերլուծության առաջին մասը վերաբերում է միասնական քննություններին, երկրորդը՝ բուհերի ընդունելության մրցույթին:

I. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության կարգի համաձայն, 2022 թ. բուհերի ընդունելության քննությունների և մասնագիտության առցանց (dimord.am կայքում) հայտագրումն անցկացվել է երկու փուլով, առաջինը՝ ապրիլի 15-ից մինչև մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում, երկրորդը՝ հունիսի 26-ից մինչև հուլիսի 1-ը (հավելված 1):

2022 թ. dimord.am կայքում միասնական և ներբուհական քննություններ է հայտագրել Հայաստանի, Արցախի և արտերկրի 13887 դիմորդ, որոնցից 11685-ը՝ միասնական, 2202-ը՝ ներբուհական քննություններ հանձնելու համար: Ներբուհական քննություն հայտագրածներից 2128-ը դիմում-հայտում նշել է երկու քննություն, իսկ 74-ը, որոնք եղել են ՀՖԿՍՊԻ-ի դիմորդներ, ներբուհական մեկ քննության հետ միասին հայտագրել են մեկ միասնական քննություն: Հետևաբար, առնվազն մեկ միասնական քննություն է հայտագրել 11759 դիմորդ:

2022 թ. դիմորդներից 13576-ը (11565-ը՝ միասնական, 2011-ը՝ ներբուհական քննություններ հանձնելու համար) հայտագրվել է առաջին փուլում, 311-ը (194-ը՝ միասնական, 117-ը՝ ներբուհական քննություններ հանձնելու համար)՝ երկրորդ փուլում:

Առաջին փուլում հայտագրված դիմորդներից 12863-ը եղել են Հայաստանի քաղաքացիներ, 229-ը՝ Ռուսաստանի, 694-ը՝ Արցախի, 73-ը՝ Վրաստանի, 28-ը՝ այլ երկրների: Երկրորդ փուլում հայտագրված 311 դիմորդներից 218-ը եղել են ՀՀ քաղաքացիներ, 57-ը՝ Վրաստանի, 19-ը՝ Ռուսաստանի, 14-ը՝ Արցախի, 2-ը՝ Իրանի, 1-ը՝ Ուկրաինայի:

Միասնական քննությունների հիմնական փուլն անցկացվել է 2022 թ. հունիսի 7-ից 24-ն ընկած ժամանակահատվածում՝ Հայաստանի Հանրապետության 41 և Արցախի Հանրապետության 6 քննական կենտրոններում: Լրացուցիչ փուլի քննություններն անցկացվել են հուլիսի 4-9-ը՝ Երևանում: Միասնական քննություններ են անցկացվել «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն), «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Միասնական քննությունների ժամանակացույցը ներկայացված է սույն վերլուծության «Հավելվածներ» բաժնում (հավելված 2):

Հայտագրված դիմորդներից 13100-ը եղել է 2022 թվականի շրջանավարտ (ՀՀ՝ 12109, Արցախ՝ 680, ՌԴ՝ 215, Վրաստան՝ 67, այլ երկրներ՝ 29 դիմորդ), 787-ը՝ նախորդ տարիների (ՀՀ՝ 753, Արցախ՝ 14, ՌԴ՝ 14, Վրաստան՝ 6), որոնցից 474-ը դպրոցն ավարտել է 2021 թվականին: 2022 թվականի շրջանավարտներից առնվազն մեկ միասնական քննություն հայտագրել է 11234 դիմորդ: Ամենաավագ դիմորդը եղել է 1992 թվականի շրջանավարտ:

Բոլոր քննություններն անցկացվել են առարկայական թեստերի 4-ական

տարբերակներով, հիմնական փուլում՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ, լրացուցիչ փուլում՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ: Թեստերի հեղինակներն օգտվել են առարկայական «Շտեմարանների» առաջադրանքներից և առաջադրանքներ են կազմել ներկայումս օգտագործվող դասագրքերի թեմաների շրջանակներում: Նրանց հնարավորություն է տրվել նաև «Շտեմարանների» որոշ առաջադրանքներում կատարելու բառերի կամ թվերի փոփոխություններ և դրանց հիման վրա կազմելու նոր առաջադրանքներ:

Օտար լեզվի քննության մասնակիցներն ընտրել են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսաց լեզու, իսպաներեն կամ իտալերեն լեզուներից որևէ մեկը:

Միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի ընթացքը պարբերաբար լուսաբանվել է լրատվամիջոցներով (հավելված 3):

1.1 ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 2022 Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Աղյուսակ 1-ում ներկայացված են 2022 թ. միասնական քննություն հայտագրած, քննության մասնակցած, բացակայած, քննության անցկացման կարգը խախտելու կամ հիվանդության պատճառով քննությունն ընդհատած դիմորդների թվերը:

Աղյուսակ 1. Դիմորդների մասնակցությունը 2022 թ. միասնական քննություններին

Քննական առարկաները	Հայտագրված-ների թիվը	Մասնակիցների թիվը	Բացակաների թիվը	Հեռացվածների թիվը	Հիվանդ. պատճ. քննութ. ընդհատ-ածների թիվը
Անգլերեն	5641	5577	61	2	1
Մաթեմատիկա	5549	5409	132	1	7
Հայոց լեզու և հայ գրականություն	5294	5209	82	2	1
Կենսաբանություն	1672	1646	21		5
Ֆիզիկա	1661	1582	73		6
Հայոց պատմություն	1487	1461	19	2	5
Քիմիա	1321	1251	60	2	8
Ռուսաց լեզու	368	341	26		1
Աշխարհագրություն	129	127	2		
Գերմաներեն	95	94	1		
Ֆրանսերեն	66	65	1		
Իտալերեն	2	2			
Իսպաներեն	2	2			

Միասնական քննություններից բացակայածների թիվը կազմել է հայտագրվածների 1.1-7.1%-ը: Իսպաներենի և իտալերենի քննություններին ներկայացել են հայտագրված բոլոր դիմորդները:

1.2 ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅՏԱԳՐԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ

Դիագրամ 1-ում, որտեղ ներկայացված են 2008-2022 թվականներին միասնական քննություններին մասնակցության հայտ ներկայացրած դիմորդների թվերը, տեսնում ենք, որ 2022 թ. միասնական քննություն հայտագրածների թիվը 2021-ի համեմատությամբ նվազել է 160-ով:

Դիագրամ 1. Միասնական քննություններ հայտագրած դիմորդների թվերը ըստ տարիների



2011 թ. դիմորդների ընդհանուր թիվը մոտ յոթ անգամ պակաս է եղել 2010 և 2012 թթ. դիմորդների թվից, քանի որ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները, 12-ամյա հանրակրթական համակարգի անցմամբ պայմանավորված, 2010-2011 ուսումնական տարում շրջանավարտ չեն ունեցել:

Միևնույն պատճառով 2018 թ. հայտագրվածների թիվը 2017 և 2019 թթ. համեմատությամբ պակաս է եղել գրեթե կրկնակի:

2020 թվականից սկսած՝ առցանց հայտագրման արդյունքում ԳԹԿ էլեկտրոնային բազաներ են ներբեռնվել նաև ընդունելության համար բացառապես ներբուհական քննություններ պահանջող մասնագիտությունների հայտերը: Ըստ այդմ՝ դիագրամ 1-ում ներկայացված են միայն առնվազն մեկ միասնական քննություն հայտագրած դիմորդների թվերը:

2022 թ. dimord.am կայքում առցանց դիմում-հայտ է լրացրել 13887 դիմորդ, որոնցից 11759-ը հայտում նշել է առնվազն մեկ միասնական քննություն:

Միասնական քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները ըստ տարիների ներկայացված են հավելված 5-ում:

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2022 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աղյուսակ 2-ում ներկայացված են 2022 թվականի միասնական քննությունների մասնակիցների թվերը[1], միջին[2] միավորները, ինչպես նաև դրական միավորի շեմը չհաղթահարած և 18-20 միավոր հավաքած դիմորդների թվերը և տոկոսները:

Աղյուսակից երևում է, որ մասնակիցների թվով առաջատարը եղել է անգլերենի քննությունը (5577 դիմորդ), դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների տոկոսով առաջատարը՝ ֆիզիկայի քննությունը (28.4%), 18-20 միավոր հավաքած դիմորդների տոկոսով՝ գերմաներենի քննությունը (37.2%):

[1] **Մասնակիցների թվից** կախված է միջին միավորի հուսալիությունը. մասնակիցների թվի մեծ լինելը նպաստում է ստանդարտ շեղման նվազմանը, որի արդյունքում միջին միավորը դառնում է հուսալի:

[2] **Միջին միավորը** բնութագրում է քննություն հանձնողների պատրաստվածության միջին մակարդակը:

Աղյուսակ 2. 2022 թ. միասնական քննությունների ընդհանուր արդյունքները

Քննական առարկաները	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների		18-20 միավոր հավաքած դիմորդների	
			թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Անգլերեն	5577	13.7	557	10.0	1133	20.3
Մաթեմատիկա	5409	11.0	1126	20.8	323	6.0
Հայոց լեզու և հայ գրականություն	5209	11.9	825	15.8	506	9.7
Կենսաբանություն	1646	11.8	452	27.5	295	17.9
Ֆիզիկա	1582	11.2	450	28.4	209	13.2
Հայոց պատմություն	1461	12.7	286	19.6	310	21.2
Քիմիա	1251	12.8	290	23.2	343	27.4
Ռուսաց լեզու	341	11.0	64	18.8	5	1.5
Աշխարհագրություն	127	12.7	12	9.4	11	8.7
Գերմաներեն	94	14.7	9	9.6	35	37.2
Ֆրանսերեն	65	13.3	6	9.2	15	23.1
Իտալերեն	2	19.1			2	100
Իսպաներեն	2	12.1	1	50.0		

3. 2022 Թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ, ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ ԵՎ ԸՍՏ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԵՌԵՐԻ

3.1. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻՑ ՄԱՍՆԱԿՑԱԾՆԵՐԻ

Աղյուսակ 3-ում ներկայացված են ՀՀ-ից և արտերկրից 2022 թ. միասնական քննություններին մասնակցած դիմորդների թվերը և միջին միավորները: Աղյուսակում գունավորած են տվյալ առարկայի քննության ընդհանուր միջին միավորից բարձր ցուցանիշների վանդակները: Մգացված շրջանակներում ներկայացած են վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորները: Միջին միավորների բացարձակ առավելագույն ցուցանիշները մուգ գույնի վրա ներկայացված են սպիտակ թվերով: Եթե տվյալ վարչատարածքային միավորից քննությանը մասնակցել է մեկ դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

Աղյուսակ 3. ՀՀ վարչատարածքային միավորներից միասնական քննություններին մասնակցած դիմորդների թվերը և միջին միավորները*

Քննական առարկաները	Մասնակիցների ընդհանուր թիվը	Ընդհանուր միջին միավորը	Երևան		Արա-գածոտն		Արարատ		Արմավիր		Գե-ղարքունիք		Լոռի		Կոտայք		Շիրակ		Սյունիք		Վայոց ձոր		Տավուշ	
			Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը
Անգլերեն	**5577**	**13.7**	2043	13.8	231	12.2	394	14.3	439	13.2	266	12.5	403	13.7	571	13.7	465	13.6	281	14.0	82	13.1	229	13.2
Մաթեմա-տիկա	**5409**	**11.0**	1864	11.1	226	10.7	392	11.2	393	10.7	308	10.5	392	11.0	466	11.8	456	11.5	313	11.2	80	10.9	259	10.5
Հայոց լեզու և հայ գրակ.	**5209**	**11.9**	1278	11.7	253	11.2	419	12.4	367	12.1	409	12.0	440	12.2	473	12.8	448	12.4	274	12.1	90	11.4	345	11.8
Կենսաբա-նություն	**1646**	**11.8**	539	12.2	65	10.8	125	11.2	122	10.8	120	12.7	108	11.5	128	12.4	153	12.6	64	13.8	40	10.5	69	11.0
Ֆիզիկա	**1582**	**11.2**	544	12.2	63	10.3	123	11.7	106	10.7	73	11.1	112	11.1	113	12.8	119	11.7	118	10.1	28	13.6	89	9.1
Հայոց պատմություն	**1461**	**12.7**	435	13.4	64	11.6	99	14.3	78	12.8	120	12.2	118	12.8	130	14.2	114	13.5	68	13.3	24	12.7	80	12.8
Քիմիա	**1251**	**12.8**	461	12.5	44	10.9	87	12.9	82	11.4	101	12.3	93	13.4	79	14.6	110	13.9	54	14.3	25	13.3	53	11.7
Ռուսաց լեզու	**341**	**11.0**	61	10.6	12	9.3	16	10.9	26	11.8	25	9.6	40	11.4	22	11.7	26	12.4	23	11.1	4	11.8	65	10.7
Աշխարհա-գրություն	**127**	**12.7**	21	12.2	3	12.1	13	13.3	13	14.2	18	12.2	22	13.0	7	14.0	11	12.2	1	14.75	2	12.3	8	12.5
Գերմաներեն	**94**	**14.7**	14	14.6	4	13.4	8	13.4	10	15.4	17	14.4	5	16.3	4	14.6	13	16.6	4	11.6	2	8.4	12	14.9
Ֆրանսերեն	**65**	**13.3**	24	14.3	6	15.0	5	9.6	1	10.5					2	10.0	6	11.2	6	14.7			14	12.8
Իտալերեն	**2**	**19.1**			1	18.5									1	19.75								
Իսպաներեն	**2**	**12.1**	2	12.1																				

*- Եթե քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

Աղյուսակ 3-ից երևում է, որ ՀՀ վարչատարածքային միավորներում միասնական քննություններից արձանագրված վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորների քանակով առաջատարը եղել է Կոտայքի մարզը (մաթեմատիկայից, հայոց լեզվից և հայ գրականությունից, քիմիայից): Դիտարկված ամենաբարձր ցուցանիշների մի մասը վիճակագրորեն նշանակալի չի եղել՝ պայմանավորված մասնակիցների փոքր թվով: Բացարձակ առավելագույն միջին միավորների քանակով ևս առաջատարը եղել է Կոտայքի մարզը (նույն առարկաներից): Երևանում, Գեղարքունիքի, Լոռու և Տավուշի մարզերում վիճակագրորեն նշանակալի բացարձակ առավելագույն միջին միավորներ չեն արձանագրվել:

Աղյուսակ 4-ում ներկայացված են 2022 թ. միասնական քննություններին մասնակցած դիմորդների թվերը և միջին միավորները՝ ըստ ՀՀ և արտերկրի քաղաքացիության:

Աղյուսակ 4. ՀՀ և արտերկրի քաղաքացիություն ունեցող դիմորդների թվերը և միջին միավորները*

Քննական առարկաները		Անգլերեն	Մաթեմատիկա	Հայոց լեզու և հայ գրականություն	Կենսաբանություն	Ֆիզիկա	Հայոց պատմություն	Քիմիա	Ռուսաց լեզու	Աշխարհագրություն	Գերմաներեն	Ֆրանսերեն	Իսպաներեն	Իտալերեն
ՀՀ	Մասնակիցների թիվը	5240	5008	4710	1486	1475	1290	1143	312	113	91	63	2	2
	Միջին միավորը	13.7	11.0	12.0	12.0	11.3	13.2	12.8	10.9	13.0	14.5	13.2	19.1	12.1
Արցախ	Մասնակիցների թիվը	193	242	438	109	62	141	58	22	10	1	2		
	Միջին միավորը	14.6	9.6	10.8	9.8	9.0	7.9	12.4	12.2	11.5	18.0	16.4		
Ռուսաստան	Մասնակիցների թիվը	96	119	31	37	31	25	36	6	3	2			
	Միջին միավորը	13.6	12.0	11.5	13.0	14.2	13.3	14.1	11.4	11.7	18.3			
Վրաստան	Մասնակիցների թիվը	34	27	26	11	9	4	10	1	1				
	Միջին միավորը	9.3	10.4	8.7	5.5	7.3	7.8	6.0	10.75	7.0				
Սիրիա	Մասնակիցների թիվը	6	4	1										
	Միջին միավորը	9.4	11.0	7.5										

Ուկրաինա	Մասնակիցների թիվը				2			2						
	Միջին միավորը				10.4			12.6						
Ղազախստան	Մասնակիցների թիվը	2	2			1								
	Միջին միավորը	16.1	13.5			8.0								
Բելառուս	Մասնակիցների թիվը		1			1								
	Միջին միավորը		12.75			10.0								
Իրան	Մասնակիցների թիվը		1			2		1						
	Միջին միավորը		8.0			4.0		3.75						
ԱՄՆ	Մասնակիցների թիվը	1	1											
	Միջին միավորը	19.75	17.25											
Նիդերլանդներ	Մասնակիցների թիվը				1			1						
	Միջին միավորը				18.75			19.75						
Լիբանան	Մասնակիցների թիվը	2	1	2			1							
	Միջին միավորը	11.8	12.25	6.6			13.75							
Իտալիա	Մասնակիցների թիվը	1	1											
	Միջին միավորը	18.75	9.25											
Լեհաստան	Մասնակիցների թիվը		1			1								
	Միջին միավորը		16.25			15.25								
Իրաք	Մասնակիցների թիվը	1		1										
	Միջին միավորը	3.5		3.75										
Հնդկաստան	Մասնակիցների թիվը	1	1											
	Միջին միավորը	18.75	8.5											
Մասնակիցների ընդհանուր թիվը		**5577**	**5409**	**5209**	**1646**	**1582**	**1461**	**1251**	**341**	**127**	**94**	**65**	**2**	**2**

*- Եթե քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

3.2. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Աղյուսակ 5-ում ներկայացված են 2022 թ. միասնական քննությունների միջին միավորներն ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի (քաղաքներ և գյուղեր)։ Համեմատության համար ներկայացված են նաև այդ քննությունների ընդհանուր միջին միավորները։

Քաղաքային բնակավայրերն ըստ բնակչության թվի տարբերակվել են խոշոր, միջին և փոքր քաղաքների։ Վերջին երկու ենթատիպերի դիմորդների թիվը և միջին միավորներն ուսումնասիրվել են միասին վերցրած։ Աղյուսակի՝ խոշոր քաղաքներին վերաբերող մասը պարունակում է և՛ ՀՀ երեք խոշոր քաղաքների (Երևանի, Գյումրու և Վանաձորի) դիմորդների ընդհանուր թվերն ու միջին միավորները, և՛ միայն Երևանի դիմորդներինը։

Գյուղական բնակավայրերի ցուցանիշները ներկայացվել են ինչպես ընդհանուր հաշվարկով, այնպես էլ սահմանամերձ[3], բարձրլեռնային և բարձրլեռնային սահմանամերձ գյուղերի համար առանձին-առանձին։

Սյունակների մգացված վանդակներում ըստ քննական առարկաների ներկայացված են ընդհանուր միջին միավորը գերազանցող ցուցանիշները, իսկ մգացված շրջանակի մեջ առնված ցուցանիշները ցույց են տալիս տվյալ առարկայի՝ վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորը։ Միջին միավորների բացարձակ ամենաբարձր ցուցանիշները մուգ գույնի վրա ներկայացված են սպիտակ թվերով։

[3] **Սահմանամերձ բնակավայրերի** ցանկը ԳԹԿ-ի էլեկտրոնային տվյալների բազաներում թարմացվել է համաձայն «ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 17.11.1998 թ. N 713 որոշման 31.07.03 N 940-Ն, 14.04.04 N 492-Ն, 01.09.05 N 1490-Ն, 21.06.07 N727-Ն լրացումների։

Աղյուսակ 5. Միջին միավորները ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի*

Քննական առարկաները	Քաղաքներ						Գյուղեր								Ընդհանուր միջին միավորը
	Խոշոր **				Միջին և փոքր										
			այդ թվում՝ Երևան						այդ թվում						
									սահմանամերձ		բարձրլեռնային		սահմանամերձ բարձրլեռնային		
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	
Անգլերեն	2451	14.0	1940	13.9	1384	13.8	1387	13.0	172	13.2	116	12.5	2	6.4	13.7
Մաթեմատիկա	2242	11.1	1794	10.9	1278	11.3	1453	10.7	185	11.0	133	10.3	1	8.25	11.0
Հայոց լեզու և հայ գրականություն	1681	11.9	1231	11.8	1306	12.7	1718	11.7	269	11.5	185	11.7	4	7.9	11.9
Ֆիզիկա	646	11.8	544	11.7	394	11.0	421	10.9	54	10.6	34	10.1	1	6.25	11.2
Կենսաբանություն	636	12.4	507	12.3	435	12.6	415	10.7	49	9.9	34	11.9	1	16.75	11.8
Քիմիա	534	12.9	426	12.6	345	13.3	263	11.9	27	11.6	24	12.6	1	18.5	12.8
Հայոց պատմություն	534	13.4	415	13.5	331	14.0	425	12.4	60	11.4	58	12.1	2	4.6	12.7
Ռուսաց լեզու	98	11.0	59	10.4	89	11.1	124	10.6	33	11.1	15	10.9			11.0
Աշխարհագրություն	35	12.5	19	12.8	23	12.5	55	13.4	6	13.2	9	13.6			12.7
Ֆրանսերեն	24	14.3	23	14.3	13	12.1	26	12.8	13	12.2					13.3
Գերմաներեն	18	15.3	14	14.6	20	17.1	53	13.3	3	9.3	6	10.7			14.7
Իսպաներեն	2	12.1	2	12.1	1	19.75	1	18.5							12.1
Իտալերեն											1	18.5			19.1

* – Եթե քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

** – ՀՀ խոշոր քաղաքներն են Երևանը, Գյումրին և Վանաձորը:

Աղյուսակ 5-ում երևում է, որ բարձր են եղել քաղաքային, առանձնապես՝ միջին և փոքր քաղաքների դիմորդների հավաքած միջին միավորները:

Բացարձակ առավելագույն միջին միավորների մեծ մասն արձանագրվել է միջին և փոքր քաղաքներում (մաթեմատիկայից, հայոց լեզու և հայ գրականությունից, կենսաբանությունից, քիմիայից, հայոց պատմությունից, ռուսաց լեզվից, գերմաներենից)։ Այդ ցուցանիշով երկրորդ տեղում են եղել խոշոր քաղաքները (անգլերենից, ֆիզիկայից և ֆրանսերենից)։ Բարձրլեռնային գյուղերն առաջատար են եղել աշխարհագրության միջին միավորով։

3.3. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Աղյուսակ 6-ում ներկայացված են միասնական քննությունների միջին միավորները ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի (ավագ և միջնակարգ դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ և այլն)։ Դիտարկվել են 2021-2022 ուսումնական տարվա շրջանավարտների արդյունքները։ Աղյուսակում «Այլ ուսումնական հաստատություններ» սյունակում ներկայացված են քոլեջներից և մասնագիտացված ուսումնական հաստատություններից միասնական քննություններ հանձնած դիմորդների արդյունքները։ Մգացված վանդակներում ներկայացված են տվյալ առարկայի քննության ընդհանուր միջին միավորից բարձր ցուցանիշները, իսկ մգացված շրջանակում՝ վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորները։ Միջին միավորների բացարձակ առավելագույն ցուցանիշները մուգ ֆոնի վրա ներկայացված են սպիտակ թվերով։

Աղյուսակ 6. Միջին միավորները ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի*

(2021-2022 ուսումնական տարվա շրջանավարտներ)

Քննական առարկաները	Ավագ դպրոցներ		Միջնակարգ դպրոցներ		Վարժարաններ		Կրթահամալիրներ		Ոչ պետական ուս. հաստատ. (ՍՊԸ-ներ)		Այլ ուսումնական հաստատություններ		Ընդհանուր միջին միավորը
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	
Անգլերեն	2656	14.0	1637	13.0	618	14.5	33	15.5	102	14.7	30	13.5	13.7
Մաթեմատիկա	2175	11.2	1754	10.5	880	12.5	38	11.5	78	11.5	39	9.1	11.0
Հայոց լեզու և հայ գրականություն	2130	12.5	2116	11.5	421	12.4	22	12.8	52	12.3	12	12.3	11.9
Կենսաբանություն	724	13.1	507	10.5	90	13.7	15	12.9	20	12.6	3	7.9	11.8
Հայոց պատմություն	642	13.7	555	11.8	102	13.7	9	15.2	28	11.7	2	11.0	12.7
Քիմիա	599	13.8	313	12.0	93	13.0	13	13.9	21	13.9	3	5.7	12.8
Ֆիզիկա	568	11.2	506	10.7	340	13.7	6	11.4	19	13.2	15	9.0	11.2
Ռուսաց լեզու	120	11.3	146	10.7	35	12.8			3	13.0	1	18.0	11.0
Աշխարհագրություն	46	12.7	67	13.1	6	9.8							12.7
Գերմաներեն	28	15.6	54	13.5	5	17.7	1	18.25					14.7
Ֆրանսերեն	27	13.8	27	13.0	1	9.5	2	15.7	3	12.7			13.3
Իտալերեն	1	19.75	1	18.5									19.1
Իսպաներեն	1	7.25							1	17.0			12.1

*- Եթե քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

Աղյուսակ 6-ում տեսնում ենք, որ ընդհանուր միջին միավորներից ցածր ցուցանիշներով առանձնացել են հատկապես միջնակարգ դպրոցները, բարձրերով՝ ավագ դպրոցները, կրթահամալիրները և վարժարանները: Վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորների քանակով առաջատարը եղել են ավագ դպրոցները (կենսաբանությունից, հայոց պատմությունից, քիմիայից, ռուսաց լեզվից, գերմաներենից և ֆրանսերենից): Բացարձակ ամենաբարձր ցուցանիշներ են արձանագրվել կրթահամալիրների (անգլերենից, հայոց լեզու և հայ գրականությունից, հայոց պատմությունից, քիմիայից, ֆրանսերենից), վարժարանների (մաթեմատիկայից, կենսաբանությունից, ֆիզիկայից, գերմաներենից) միջնակարգ դպրոցների (աշխարհագրությունից), ոչ պետական ուսումնական հաստատությունների (քիմիայից և ռուսաց լեզվից) շրջանավարտների արդյունքներում:

Աղյուսակ 7-ում ներկայացված են միասնական քննություններին 1-ից ավելի մասնակից ունեցած և 18-ից բարձր միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները:

Աղյուսակ 7. Միասնական քննություններից 18-20 միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Վարչա-տարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտ-ների թիվը	Քննության մաս-նակիցների թիվը	Միջին միավորը
Հայոց պատմություն				
Կոտայք	Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց	55	4	19.4
Կոտայք	Պտղնիի միջնակարգ դպրոց	11	2	19.3
Երևան	«Երևակ» կրթահամալիր	20	3	18.8
Շիրակ	Գյումրու թիվ 1 ավագ դպրոց	58	3	18.7
Շիրակ	«ՇՊՀ» հիմնադրամի ավագ դպրոց	60	4	18.6
Կոտայք	Արամուսի միջնակարգ դպրոց	39	2	18.5
Կոտայք	Սոլակի միջնակարգ դպրոց	10	3	18.3
Շիրակ	Արևշատի միջնակարգ դպրոց	16	2	18.1

Վարչա-տարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտ-ների թիվը	Քննության մաս-նակիցների թիվը	Միջին միավորը
Հայոց լեզու և հայ գրականություն				
Արարատ	Արալեզի միջնակարգ դպրոց	15	3	18.8
Կոտայք	Կապուտանի միջնակարգ դպրոց	6	2	18.8
Արագածոտն	Ուշիի միջնակարգ դպրոց	17	2	18.6
Գեղարքունիք	Ծովասարի միջնակարգ դպրոց	20	2	18.3
Անգլերեն				
Արարատ	Նիզամիի միջնակարգ դպրոց	12	2	18.6
Երևան	«Մակսեդան» օտար լեզուների մասնավոր դպրոց	9	2	18.5
Արարատ	Վարդաշենի միջնակարգ դպրոց	15	2	18.4

Շիրակ	Ազատանի միջնակարգ դպրոց	48	2	18.1
Քիմիա				
Շիրակ	Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց	32	2	19.9
Շիրակ	Այգաբացի միջնակարգ դպրոց	10	2	19.8
Շիրակ	Մարալիկի թիվ 2 միջնակարգ դպրոց	16	2	19.5
Երևան	«Օլիմպոս» կ/հ ավագ դպրոց	19	2	19.3
Սյունիք	Շինուհայրի միջնակարգ դպրոց	34	2	19.1
Կոտայք	Աբովյանի թիվ 1 ավագ դպրոց	97	7	18.8
Կոտայք	Կամարիսի միջնակարգ դպրոց	22	2	18.5
Երևան	Թիվ 113 միջնակարգ դպրոց	48	2	18.5
Երևան	«Էլիտա» հեղինակային միջնակարգ դպրոց	14	2	18.4
Սյունիք	Կապանի թիվ 2 ավագ դպրոց	99	11	18.1
Մաթեմատիկա				
Արարատ	Բյուրավանի միջնակարգ դպրոց	11	2	18.8
Գեղարքունիք	Ծաղկունքի միջնակարգ դպրոց	13	2	18.6
2022 թ. 18-20 միջակայքում միջին միավորներ չեն արձանագրվել աշխարհագրությունից, ռուսաց լեզվից և ֆրանսերենից:				

Գեղարքունիք	Նորատուսի թիվ 3 միջնակարգ դպրոց	11	2	18.1
Երևան	«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր	96	7	18.0
Կենսաբանություն				
Շիրակ	Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց	32	2	20.0
Երևան	«Օլիմպոս» կրթահամալիր-ավագ դպրոց	19	2	18.9
Շիրակ	«ՇՊՀ» հիմնադրամի ավագ դպրոց	60	6	18.8
Արարատ	Նշավանի միջնակարգ դպրոց	12	2	18.6
Սյունիք	Կապանի թիվ 2 ավագ դպրոց	99	11	18.0
Ֆիզիկա				
Արարատ	Ներքին Դվինի միջնակարգ դպրոց	23	2	20.0
Արագածոտն	Նոր Եդեսիայի միջնակարգ դպրոց	17	3	18.8
Արարատ	Կանաչուտի միջնակարգ դպրոց	9	2	18.6
Արարատ	Բյուրավանի միջնակարգ դպրոց	11	2	18.3
Գերմաներեն				
Տավուշ	Դիլիջանի ավագ դպրոց	96	4	19.3
Շիրակ	Արթիկի թիվ 3 ավագ դպրոց	92	2	18.9

3.4. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՅԻՆ ԿԱԶՄԻ

2022 թվականին միասնական մեկ կամ երկու քննություն է հանձնել 11759 դիմորդ, որոնցից իգական սեռի՝ 6862 (58.4%) և արական սեռի՝ 4897 (41.6%): Նրանցից 2022 թվականի շրջանավարտ են եղել 11234-ը (6590 աղջիկ (աղջիկների 96%-ը) և 4644 տղա (տղաների 94.8%-ը)): 2021 թ. շրջանավարտ են եղել 200 աղջիկ և 89 տղա: Միասնական քննություն հանձնած իգական սեռի դիմորդներից ամենաավագը եղել է 1980 թ. ծնված, արական սեռինը՝ 1990 թ.:

Աղյուսակ 8-ում ըստ դիմորդների սեռերի ներկայացված են միասնական քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորները: Մգացված են յուրաքանչյուր քննության ընդհանուր միջին միավորը գերազանցող ցուցանիշների վանդակները:

Աղյուսակ 8. 2022 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ դիմորդների սեռերի*

Քննական առարկաները	Իգական սեռ		Արական սեռ		Ընդհանուր միջին միավորը
	մասնակից-ների թիվը	միջին միավորը	մասնակից-ների թիվը	միջին միավորը	
Հայոց լեզու և հայ գրականություն	4042	12.5	1167	9.8	11.9
Անգլերեն	3738	14.2	1839	12.5	13.7
Մաթեմատիկա	2102	11.5	3307	10.6	11.0
Կենսաբանություն	1093	11.7	553	12.1	11.8
Հայոց պատմություն	871	12.9	590	12.4	12.7
Քիմիա	788	12.7	463	12.8	12.8
Ֆիզիկա	320	13.1	1176	10.8	11.2
Ռուսաց լեզու	235	11.6	106	9.5	11.0
Աշխարհագրություն	85	12.9	42	12.4	12.7
Գերմաներեն	81	15.1	13	11.9	14.7
Ֆրանսերեն	61	13.4	4	11.8	13.3
Իսպաներեն	2	12.1			12.1
Իտալերեն	1	19.75	1	18.5	19.1

*- Եթե քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

Աղյուսակ 8-ից երևում է, որ աղջիկների հավաքած միջին միավորները բարձր են եղել համապատասխան ընդհանուր միջին և տղաների հավաքած միջին միավորներից: Իգական սեռի դիմորդների ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է գերմաներենից (15.1), ամենացածրը՝ մաթեմատիկայից (11.5), արական սեռինը, համապատասխանաբար, քիմիայից (12.8) ու ռուսաց լեզվից (9.5): Իսպաներենի քննությանը մասնակցել են միայն աղջիկներ:

4. ԹԵՍՏԵՐ ԵՎ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

2022 թ. միասնական քննությունների թեստերը կազմվել են առարկայական «Շտեմարաններում» առկա առաջադրանքներից, «Շտեմարանների» առաջադրանքների և դասագրքերում զետեղված թեմաների հիման վրա կազմված նոր առաջադրանքներից:

Հայոց լեզվի և հայ գրականության, հայոց պատմության, մաթեմատիկայի և բնագիտական առարկաների թեստերը կազմված են եղել ընտրովի, կարճ պատասխանով առաջադրանքներից և պնդումների փնջերից, օտար լեզուներինը՝ ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներից: Թեստերի կառուցվածքի և գնահատման վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են հավելված 4-ում:

Աղյուսակ 9-ում ներկայացված են միասնական քննությունների հիմնական փուլի թեստերի միջին միավորները, բարդության և հուսալիության գործակիցները:

Աղյուսակ 9. 2022 թ. միասնական քննությունների հիմնական փուլի թեստերի միջին միավորը, բարդությունը[4] և հուսալիությունը[5]

Քննական առարկան	Թեստի համարը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Բարդության գործակիցը	Հուսալիության գործակիցը
Հայոց լեզու և հայ գրակա-նություն	1	1294	12.2	0.64	0.947
	2	1294	11.9	0.63	0.947
	3	1284	12.0	0.63	0.945
	4	1270	11.7	0.61	0.947
Հայոց պատ-մություն	1	363	12.8	0.66	0.969
	2	360	12.9	0.67	0.971
	3	361	12.8	0.67	0.969
	4	357	12.5	0.65	0.967
Անգլերեն	1	1381	13.7	0.68	0.965
	2	1370	14.0	0.70	0.961
	3	1382	13.5	0.68	0.964
	4	1369	13.6	0.68	0.961
Ռուսաց լեզու	1	66	13.0	0.65	0.949
	2	64	12.4	0.62	0.950
	3	59	13.4	0.67	0.946
	4	57	12.2	0.61	0.956

Քննական առարկան	Թեստի համարը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Բարդության գործակիցը	Հուսալիության գործակիցը
Մաթեմա-տիկա	1	1331	10.9	0.60	0.956
	2	1318	11.2	0.61	0.952
	3	1322	11.0	0.61	0.954
	4	1325	11.0	0.61	0.954
Կենսաբա-նություն	1	405	11.9	0.62	0.974
	2	395	12.0	0.63	0.976
	3	398	12.2	0.63	0.975
	4	389	11.7	0.62	0.975
Քիմիա	1	304	12.6	0.65	0.977
	2	299	13.2	0.67	0.978
	3	298	12.9	0.66	0.977
	4	303	12.8	0.65	0.977
Ֆիզիկա	1	385	11.4	0.60	0.968
	2	380	11.2	0.58	0.968
	3	383	11.7	0.61	0.969
	4	378	11.4	0.60	0.967

[4] **Բարդություն:** Թեստը համարվում է շատ հեշտ, երբ բարդության գործակիցը (P) գտնվում է 0.9-1.0 սահմաններում: 0.75≤P≤0.89 սահմաններում թեստը հեշտ է, 0.30≤P≤0.74 սահմաններում՝ միջին բարդության, 0.20≤P≤0.29 սահմաններում՝ բարդ, P≤0.19 դեպքում՝ շատ բարդ:

[5] **Հուսալիություն:** Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

Ֆրանսերեն	1	19	13.7	0.68	0.971
	2	17	12.6	0.63	0.954
	3	14	14.5	0.72	0.955
	4	13	13.3	0.67	0.961
Գերմաներեն	1	27	14.4	0.72	0.975
	2	20	12.2	0.61	0.965
	3	24	15.3	0.77	0.965
	4	22	16.8	0.84	0.953

Աշխարհագրություն	1	30	12.5	0.65	0.953
	2	32	13.2	0.69	0.922
	3	33	12.8	0.66	0.929
	4	30	12.7	0.66	0.924

II. ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ

5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

➢ ***Հայտագրում***

2022-2023 ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության N 477-Ն որոշման (7 ապրիլի 2022 թ.) համաձայն բակալավրի կրթական ծրագրով ընդունելության նպատակով ԳԹԿ-ի կողմից կազմակերպվող մրցույթի ցանկում ընդգրկված բուհերին տրամադրվել են 1933 անվճար և 21802 վճարովի տեղեր:

2022 թ. բուհերի ընդունելության հիմնական փուլի մրցույթն անցկացվել է մեկ մասնագիտության (անվճար և վճարովի) հայտագրմամբ:

2022 թ. dimord.am կայքում բուհ և մասնագիտություն է հայտագրել 12996 դիմորդ: Ընդունելության մրցույթին մասնակցելու համար նախատեսված երկու քննություններից առնվազն մեկ միասնական քննություն պահանջող մասնագիտություն է հայտագրել նրանցից 10856-ը, առնվազն մեկ ներբուհական քննություն պահանջող՝ 2128-ը, 12 դիմորդ քննություն է հանձնել օտարերկրյա ռազմական հաստատություն ընդունվելու նպատակով:

➢ ***Ընդունելություն***

Բուհերի ընդունելության մրցույթը կազմակերպվել է երկու փուլով:

Հիմնական փուլում հայտագրած յուրաքանչյուր մասնագիտության մրցույթն անցկացվում է մրցութային քննություններից ստացած դրական միավորների գումարով: Բուհ ընդունված դիմորդների ցուցակը կազմվում է տվյալ մասնագիտության համար սահմանված քննություններից հավաքած միավորների գումարի նվազման կարգով: Հիմնական փուլի մրցույթի արդյունքները հրապարակվել են 2022 թ. հուլիսի 18-ին:

Լրացուցիչ փուլի մրցույթն անցկացվել է դրական գնահատականներով հիմնական փուլի մրցույթով չընդունված դիմորդների համար: Նրանց հնարավորություն է տրվել հայտագրելու մեկ կամ ավելի բուհի՝ մինչև վեց մասնագիտություն, եթե այդ մասնագիտություններում (անվճար և վճարովի) առկա են եղել թափուր տեղեր: Դիմում-

հայտում նշված որևէ մասնագիտությամբ ընդունված դիմորդները չեն մասնակցել հաջորդ մասնագիտությունների մրցույթին, իսկ չընդունված դիմորդներն ըստ հայտում նշված հերթականության մասնակցել են հաջորդ մասնագիտությունների մրցույթներին: Մրցույթի անցկացման գործընթացում նախապատվությունը տրվել է տվյալ մասնագիտության քննություններից առավել բարձր միավորներ ունեցող դիմորդներին: Ընդունելության մրցույթի լրացուցիչ՝ թափուր տեղերի մրցույթի արդյունքները հրապարակվել են հուլիսի 30-ին:

Բուհերի ընդունելության մրցույթի հիմնական և լրացուցիչ փուլերի արդյունքում ընդունվել է 9729 (մասնագիտություն հայտագրածների 74.9%-ը) դիմորդ:

Մրցույթի առաջին փուլում հայտագրված 12996 դիմորդներից ընդունվել է 8974-ը (հայտագրվածների 69.1%-ը, երկու փուլերի արդյունքում ընդունված 9729 դիմորդների 92.2%-ը): Երկրորդ փուլում (թափուր մնացած տեղերով) հայտագրվել է երկու քննություններից դրական միավորներ հավաքած և առաջին փուլում չընդունված 772 դիմորդ, որոնցից ընդունվել է 755-ը (հայտագրված 772 դիմորդների 97.8%-ը, ընդունվածների 7.8%-ը):

Ուսուցման անվճար հիմունքներով ընդունվել է 1797 դիմորդ (1738-ը՝ առաջին փուլում, 59-ը՝ երկրորդում), վճարովի հիմունքներով՝ 7932-ը (7236-ը՝ առաջին փուլում, 696-ը՝ երկրորդում): Անվճար հիմունքներով ընդունված 1797 դիմորդներից 68-ն ընդունվել են պահուստային տեղերով (արտոնություններով) և նպատակային պետական անվճար տեղերով (առաջին փուլում): Վճարովի հիմունքներով ընդունված 7932 դիմորդներից պահուստային տեղերով ընդունվել են 45-ը (44-ը՝ առաջին փուլում, 1-ը՝ երկրորդ փուլում): Ընդհանուր հաշվով պահուստային տեղերով (արտոնություններով) ընդունվել է 101 դիմորդ, նպատակային պետական անվճար տեղերով՝ 12 (ընդամենը՝ 113 դիմորդ):

Երկու միասնական քննությունների արդյունքներով բուհ է ընդունվել 7943 դիմորդ (81.6%) երկու ներբուհական քննությունների արդյունքներով՝ 1767-ը (18.2%), մեկ միասնական և մեկ ներբուհական քննությունների արդյունքներով՝ 19-ը (0.2%):

Միասնական քննություններ հայտագրած դիմորդների թիվը (13887) միասնական քննություն պահանջող մասնագիտություն հայտագրածների թվից (12996) մեծ է, որովհետև նրանց մի մասը դիմել է բուհերի ընդունելության մրցույթի ցանկում չընդգրկված այլ բուհեր կամ նպատակ է ունեցել միասնական քննության արդյունքով որևէ բուհի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու:

Բուհերում հայտագրված 12996 դիմորդներից 12718-ը (97.9%) դիմել են պետական բուհեր, 278-ը (2.1%)՝ ոչ պետական բուհեր: Բուհ ընդունված 9729 դիմորդներից պետական բուհեր են ընդունվել 9598-ը (98.7%), ոչ պետական բուհեր՝ 131-ը (1.3%):

5.1 ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԸՍՏ ԲՈՒՀԵՐԻ ԵՎ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ

Աղյուսակ 10-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և ՀՀ-ում միասնական քննություններին մասնակից դիմորդներ ունեցած երկրների ներկայացված են բուհ ընդունվածների տոկոսները:

Աղյուսակ 10. Բուհ ընդունվածների թվերը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և այլ երկրների

		ՀՀ (վարչատարածքային միավորները)																	
		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Ընդամենը՝ ՀՀ-ից	Արցախ	Վրաստան	Ռուսաստան	Այլ երկրներ	Ընդամենը	Ընդամենը՝ բոլոր երկրներից
Հայտագրվածների	թիվը	4470	563	961	948	812	936	1152	1128	633	221	673	**12497**	193 *	71	209	26	**499 ***	**12996**
	տոկոսը հայտագրվածների ընդհանուր թվից	34.4	4.3	7.4	7.3	6.2	7.2	8.9	8.7	4.9	1.7	5.2	**96.2**	1.5	0.5	1.6	0.2	**3.8**	**100**
Ընդունվածների	թիվը	3391	396	733	682	586	687	911	883	463	153	479	**9364**	161 *	26	159	19	**365 ***	**9729**
	տոկոսը ընդունվածների ընդհանուր թվից	34.9	4.1	7.5	7.0	6.0	7.1	9.4	9.1	4.8	1.6	4.9	**96.2**	1.7	0.3	1.6	0.2	**3.8**	**100**
	տոկոսը տարածքային տվյալ միավորից հայտագրվածների թվից	75.9	70.3	76.3	71.9	72.2	73.4	79.1	78.3	73.1	69.2	71.2	**74.9**	83.4	36.6	76.1	73.1	**73.1**	**74.9**

* ՀՀ քաղաքացիներից երկուսը հայտագրվել են Արցախից:

Աղյուսակում երևում է, որ ՀՀ-ից հայտագրվել է 12497 դիմորդ, որոնցից ընդունվել է 9364-ը (74.9%): ՀՀ քաղաքացիները կազմել են բոլոր ընդունվածների 96.2%-ը: Բուհ ընդունված երևանաբնակ դիմորդները կազմել են բոլոր դիմորդների 34.9%-ը: ՀՀ մարզերից բուհ ընդունվածների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Կոտայքում. բուհերում հայտագրված 12996 դիմորդների 9.4%-ը կազմած 1152 դիմորդներից ընդունվել է 911-ը (բոլոր ընդունվածների 9.4%-ը): Վարչատարածքային տվյալ միավորից

բուհերում հայտագրվածներից ընդունվածների տոկոսով առաջատարը դարձյալ եղել է Կոտայքի մարզը (79.1%):

Աղյուսակ 11. 2022 թ. բուհերի ընդունելության մրցույթի լրացուցիչ փուլով ընդունվածների թիվը

Բուհը	Ընդունվածների		Բուհը	Ընդունվածների	
	թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը
ԵՊՀ	183	24.2	«Էրեբունի» բժշկական ակադեմիա	7	0.9
ՀԱՊՀ (Երևան)	155	20.5	Շիրակի պետական համալսարան	3	0.4
ՃՇՀԱՀ	83	11.0	ՀԱՊՀ-ի Գյումրու մասնաճյուղ	2	0.3
ՀՊՏՀ	75	9.9	ՀԱԱՀ	2	0.3
ՀՌՀ (Սլավոնական համալսարան)	73	9. 7	Եվրասիա միջազգային համալսարան	2	0.3
ԵՊԲՀ	50	6.6	Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարան	1	0.13
Հայկական բժշկական ինստիտուտ	29	3.8	Գորիսի պետական համալսարան	1	0.13
ԲՊՀ	27	3.6	Գավառի պետական համալսարան	1	0.13
Եվրոպական համալսարան	17	2.3	Երևանի «Գլաձոր» համալսարան	1	0.13
ՀՊՄՀ	15	2.0	Ա. Մկրտչյանի անվան տնտեսաիրավագիտական համալսարան	1	0.13
Երևանի «Հայբուսակ» համալսարան	12	1.6	ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ	1	0.13
Վանաձորի պետական համալսարան	7	0.9	Ընդամենը	755	100
ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղ	7	0.9			

Աղյուսակ 11-ից երևում է, որ 2022 թ. բուհերի ընդունելության մրցույթի լրացուցիչ փուլով ընդունված դիմորդների ամենաբարձր՝ 24.2%-ն ընդունվել է ԵՊՀ: Երկրորդ տեղում եղել է ՀԱՊՀ-ն (20.5%), երրորդ տեղում՝ ՃՇՀԱՀ-ն (11%):

Աղյուսակ 12-ում ներկայացված են ՀՀ բուհեր ընդունված դիմորդների տոկոսները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և արտերկրի: Տվյալ վարչատարածքային միավորից կամ երկրից ըստ բուհերի ընդունվածների տոկոսները հաշվարկված են բուհերում այդ վարչատարածքային միավորից կամ երկրից ընդունվածների ընդհանուր թվից: Աղյուսակում գունավորած է վարչատարածքային յուրաքանչյուր միավորի ամենաբարձր ցուցանիշի վանդակը:

Աղյուսակ 12. 2022 թ. բուհ ընդունված դիմորդների տոկոսային բաշխումը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և արտերկրի

		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Տավուշ	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Արցախ *	Հրապարակ	Ռուսաստան	Այլ երկրներ
ԵՊՀ	Ընդունվածների թիվը	952	118	205	163	159	83	219	141	102	21	70	33	10	42	5
	Տոկոսը	28.1	29.8	28.0	23.9	27.1	12.1	24.0	16.0	22.0	13.7	14.6	20.5	38.5	26.4	26.3
ՀԱՊՀ (Երևան)	Ընդունվածների թիվը	388	50	102	69	48	40	104	33	49	19	19	6		25	3
	Տոկոսը	11.4	12.6	13.9	10.1	8.2	5.8	11.4	3.7	10.6	12.4	4.0	3.7		15.7	15.8
ՃՇՀԱՀ	Ընդունվածների թիվը	358	23	42	29	37	23	41	16	15	23	15	12	2	9	3
	Տոկոսը	10.6	5.8	5.7	4.3	6.3	3.4	4.5	1.8	3.2	15.0	3.1	7.5	7.7	5.7	15.8
ՀՊՏՀ	Ընդունվածների թիվը	354	59	98	120	76	63	143	47	73	22	44	37	7	13	3
	Տոկոսը	10.4	14.9	13.3	17.6	13.0	9.2	15.7	5.3	15.8	14.4	9.2	23.0	26.9	8.2	15.8
ԲՊՀ (ԵՊԼՀ)	Ընդունվածների թիվը	324	43	99	113	57	64	145	59	60	18	33	26	3	2	
	Տոկոսը	9.6	10.9	13.5	16.6	9.7	9.3	15.9	6.7	13.0	11.8	6.9	16.2	11.5	1.3	
ԵՊԲՀ	Ընդունվածների թիվը	265	23	46	41	55	52	57	81	41	17	25	1	1	22	2
	Տոկոսը	7.8	5.8	6.3	6.0	9.4	7.6	6.3	9.2	8.9	11.1	5.2	0.6	3.85	13.8	10.5
ՀՊՄՀ	Ընդունվածների թիվը	167	26	52	47	42	12	68	11	27	12	18	7	1	1	1
	Տոկոսը	4.9	6.6	7.1	6.9	7.2	1.7	7.5	1.3	5.8	7.8	3.8	4.3	3.85	0.6	5.26
ՀԱԱՀ	Ընդունվածների թիվը	19		2	3	2	1	6	1		1	2	1		1	1
	Տոկոսը	0.6		0.3	0.4	0.3	0.1	0.7	0.1		0.7	0.4	0.6		0.6	5.26
Այլ բուհեր	Ընդունվածների թիվը	564	54	87	97	110	349	128	494	96	20	253	38	2	44	1
	Տոկոսը	16.6	13.6	11.9	14.2	18.8	50.8	14.0	55.9	20.7	13.1	52.8	23.6	7.7	27.7	5.26
Ընդամենը	Ընդունվածների թիվը	**3391**	**396**	**733**	**682**	**586**	**687**	**911**	**883**	**463**	**153**	**479**	**161 ***	**26**	**159**	**19**

* ՀՀ քաղաքացիներից երկուսը հայտագրվել են Արցախից:

Աղյուսակ 12-ում տեսնում ենք, որ ՀՀ մարզերից հայտագրվածների և ընդունվածների թվերով առաջատար բուհը եղել է ԵՊՀ-ն: Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերում գործող բուհերի և խոշոր բուհերի մասնաճյուղերի առկայությունը պայմանավորել է նշված մարզերից այդ բուհեր դիմած և ընդունված դիմորդների բարձր տոկոսը: Դա առավել ընդգծված է հատկապես Շիրակի մարզում (55.9%): Նշված մարզերից հայտագրվածների և ընդունվածների թվով ԵՊՀ-ն եղել է 2-րդ տեղում: Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերում գործող բուհերում ու խոշոր բուհերի մասնաճյուղերում հայտագրվածների և ընդունվածների վիճակագրական պատկերը ներկայացված է աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13. ՀՀ մարզերում գործող բուհերում 2022 թ. հայտագրված և ընդունված դիմորդների թվերը

Մարզը	Բուհը	Հայտագրվածներ					Ընդունվածներ				
		Տվյալ մարզից ՀՀ բուհեր ներկայացրած հայտերի ընդհանուր թիվը	Ընդհանուր թիվը տվյալ բուհում	Թիվը տվյալ մարզից	Տոկոսը տվյալ բուհի հայտերի ընդհանուր թվից	Տոկոսը տվյալ մարզից ՀՀ բուհեր ներկայացրած հայտերի թվից	Տվյալ մարզից ՀՀ բուհեր ընդունվածների ընդհանուր թիվը	Ընդհանուր թիվը տվյալ բուհում	Թիվը տվյալ մարզից	Տոկոսը տվյալ բուհ ընդունվածների թվից	Տոկոսը տվյալ մարզից ՀՀ բուհեր ընդունվածների ընդհանուր թվից
Շիրակ	Շիրակի պետական համալսարան	1189	284	274	96.5	23.0	883	196	191	97.4	21.6
	ՀՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղ		167	161	96.4	13.5		121	116	95.9	13.1
	ՀԱՊՀ-ի Գյումրու մասնաճյուղ		79	75	94.9	6.3		52	50	96.2	5.7
	ՀԳՊԱ-ի Գյումրու մասնաճյուղ		46	42	91.3	3.5		45	42	93.3	4.8
	ԵԹԿՊԻ-ի Գյումրու մասնաճյուղ		32	28	87.5	2.4		27	24	88.9	2.7
	ԵՊԿ-ի Գյումրու մասնաճյուղ		28	18	64.3	1.5		27	18	66.7	2.0
	Եվրոպական համալս. Գյումրու մասն.		3	3	100	0.3					
Ընդամենը՝ Շիրակի մարզում		**1189**	**639**	**601**	**94.1**	**50.5**	**883**	**468**	**441**	**94.2**	**49.9**
Լոռի	Վանաձորի պետական համալսարան	975	359	344	95.8	35.3	687	242	234	96.7	34.1
	ՀԱՊՀ-ի Վանաձորի մասնաճյուղ		93	91	97.8	9.3		48	48	100	7.0

	ԵԹԿՊՀ-ի Վանաձորի մասնաճյուղ		12	12	100	1.2		11	11	100	1.6
Ընդամենը՝ Լոռու մարզում		975	464	447	96.3	45.8	687	301	293	97.3	42.6
Գեղարքունիք	Գավառի պետական համալսարան	874	78	73	93.6	8.4	586	49	47	95.9	8.0
	Վարդենիսի մանկավարժական ինստ.		1	1	100	0.1					
Ընդամենը՝ Գեղարքունիքի մարզում		874	79	74	97.3	8.5	586	49	47	95.9	8.0
Սյունիք	Գորիսի պետական համալսարան	653	70	68	97.1	10.4	463	35	34	97.1	7.3
	ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղ		71	69	97.2	10.6		32	30	93.8	6.5
Ընդամենը՝ Սյունիքի մարզում		653	141	137	97.2	21.0	463	67	64	95.5	13.8
Տավուշ	ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղ	697	264	263	99.6	37.7	479	186	186	100	38.8
	ՀԳՊԱ-ի Դիլիջանի մասնաճյուղ		4	3	75.0	0.4		3	2	66.7	0.4
Ընդամենը՝ Տավուշի մարզում		697	268	266	99.3	38.2	479	189	188	99.5	39.2
Ընդամենը՝ նշված հինգ մարզերում		4388	1591	1525	95.9	34.8	3098	1074	1033	96.2	33.3

Աղյուսակ 13-ում երևում է, որ 2022 թ. Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերից առցանց եղանակով ՀՀ բուհեր է ներկայացվել 4388 դիմում-հայտ: Նշված մարզերում գործող բուհերում դիմում-հայտերի ընդհանուր քանակը կազմել է 1591, որից 1525-ը (95.9%) ներկայացրել են տեղացի դիմորդները: Մարզերում գործող բուհերի հայտերը կազմել են այդ մարզերից ՀՀ բուհեր ներկայացված հայտերի 34.8%-ը:

Թվարկված մարզերից 2022 թ. ՀՀ բուհեր է ընդունվել 3098 դիմորդ: Այդ մարզերում գործող բուհեր է ընդունվել 1074 դիմորդ, որոնցից 1033-ը (96.2%)՝ տեղացիներ: Վերոհիշյալ բուհեր ընդունվածները կազմել են այդ մարզերից ՀՀ բուհեր ընդունվածների 33.3%-ը:

Դիտարկված բուհերում հայտագրված տեղացի դիմորդների տոկոսը բարձր է եղել հատկապես ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղում, Վանաձորի և Շիրակի պետական համալսարաններում (համապատասխանաբար՝ 37.7%, 35.3%, 23.0%՝ հաշված տվյալ մարզից ՀՀ բուհերում հայտագրվածների ընդհանուր թվից): Այդ բուհեր ընդունվածների տոկոսները՝ հաշված տվյալ մարզից ՀՀ բուհեր ընդունվածների ընդհանուր թվից, եղել են, համապատասխանաբար, 38.8%, 34.1%, 21.6%:

Նշված բուհերում հայտագրված տեղացի դիմորդների ընդհանուր թիվը (1525) կազմել է 2022 թվականին ՀՀ բուհերում հայտագրվածների (12996) 11.7%-ը: Այդ բուհեր ընդունված 1074 տեղացիները կազմել են բոլոր ընդունվածների (9729) 11%-ը:

5.2 ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԱՐԿԸ ԸՍՏ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

Մանկավարժի որակավորում շնորհող պետական բուհերի (ՀՊՄՀ, ԵՊԼՀ, ՇՊՀ, ՎՊՀ և այլն) նույն մասնագիտություններն ընտրած դիմորդների թվերը ներկայացված են աղյուսակ 14-ում, որտեղ տեսնում ենք, որ այդ մասնագիտությունները մրցույթի հիմնական փուլում հայտագրել է 447 դիմորդ (այդ փուլում հայտագրվածների 3.4 տոկոսը): Հայտագրվածների թվով առաջատար են եղել «Անգլերեն լեզու և գրականություն», «Հայոց լեզու և գրականություն» ու «Պատմություն» մասնագիտությունները:

Աղյուսակ 14. Հայտագրված և ընդունված դիմորդների թվերը մանկավարժի որակավորում շնորհող բուհերում

Մասնագիտությունը	Հայտագրված-ների թիվը	Ընդունված-ների թիվը	Ընդունված-ների տոկոսը
Անգլերեն լ. և գրականություն	220	175	79.5
Հայոց լեզու և գրականություն	67	47	70.1
Պատմություն	61	40	65.6
Ռուսաց լ. և գրականություն	32	23	71.9
Կենսաբանություն	30	7	23.3
Մաթեմատիկա	11	6	54.5
Ֆրանսերեն լեզու և գրականություն	9	8	88.9
Գերմաներեն լեզու և գրականություն	9	7	77.8
Աշխարհագրություն	5		
Ֆիզիկա	2	1	50.0
Քիմիա	1		
Ընդամենը	447	314	70.2

Մանկավարժի որակավորում շնորհող բուհերում վերջին հինգ տարիներին մրցույթի հիմնական փուլում ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների մասնագիտությունների գծով 1-ին հայտով միջինում հայտագրվել է տվյալ տարվա դիմորդների չորս տոկոսը:

5.3 ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՏՈԿՈՍՈՎ ԱՌԱՆՁՆԱՑԱԾ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Աղյուսակ 15-ում ներկայացված է 2021-2022 ուսումնական տարում տասը և ավելի շրջանավարտ ունեցած հաստատություններից բուհ ընդունվածների ամենաբարձր տոկոս ունեցած հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը, որտեղ դպրոցները դասավորված են տոկոսների նվազման կարգով:

Աղյուսակ 15. Բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը

Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Վարչա-տարածքային միավորը	Շրջանավարտ-ների թիվը	Բուհ ընդունվածների	
			թիվը	տոկոսը
Արմավիրի թիվ 4 ավագ դպրոց	Արմավիր	66	65	98.5
Մասիսի թիվ 5 ավագ դպրոց	Արարատ	71	69	97.2
Թիվ 118 ավագ դպրոց	Երևան	129	125	96.9
Արտաշատի ավագ դպրոց	Արարատ	87	83	95.4
Թիվ 190 ավագ դպրոց	Երևան	255	233	91.4
Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց	Լոռի	39	35	89.7
Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց	Լոռի	91	80	87.9
Թիվ 54 ավագ դպրոց	Երևան	139	122	87.8
Վաղարշապատի թիվ 2 ավագ դպրոց	Արմավիր	96	83	86.5
«Ֆոտոն» վարժարան	Շիրակ	130	106	81.5

Աղյուսակում երևում է, որ բուհ ընդունված շրջանավարտների տոկոսով առաջատար հանրակրթական ուսումնական հաստատությունը եղել է Արմավիրի թիվ 4 ավագ դպրոցը, որի 66 շրջանավարտներից 65-ն (98.5%) ընդունվել են ՀՀ բուհեր: Նշված տասը դպրոցներից բուհեր ընդունված ամենամեծ թվով շրջանավարտներ է ունեցել Երևանի թիվ 190 ավագ դպրոցը (ընդունվածների թիվը՝ 233 (91.4%)):

Աղյուսակ 16-ում ներկայացված են ըստ ՀՀ վարչատարածքային միավորների բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները, որոնք դասավորված են ընդունվածների տոկոսի նվազման կարգով: Այստեղ ևս դիտարկվել են 2022 թվականին տասը և ավելի շրջանավարտ ունեցած հաստատությունները:

Աղյուսակ 16. Բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների թիվը	Բուհ ընդունվածների տոկոսը	Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների թիվը	Բուհ ընդունվածների տոկոսը
Երևան	Թիվ 118 ավագ դպրոց	129	125	96.9	Կոտայք	Նոր Հաճնի ավագ դպրոց	51	38	74.5
	Թիվ 190 ավագ դպրոց	255	233	91.4		Չարենցավանի ավագ դպրոց	155	112	72.3
	Թիվ 54 ավագ դպրոց	139	122	87.8		Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց	114	80	70.2
	ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց	274	217	79.2		Եղվարդի թիվ 1 ավագ դպրոց	119	79	66.4
	ԵՊԲՀ-ի «Հերացի» ավագ դպրոց	160	116	72.5		Զորավանի միջնակարգ դպրոց	16	10	62.5
Արագածոտն	Թաթուլի միջնակարգ դպրոց	10	8	80.0	Շիրակ	«Ֆոտոն» վարժարան	130	106	81.5
	Նոր Եդեսիայի միջնակարգ դպրոց	17	11	64.7		Արթիկի թիվ 3 ավագ դպրոց	92	67	72.8
	Նորաշենի միջնակարգ դպրոց	11	7	63.6		Երազգավորսի միջնակարգ դպրոց	11	8	72.7
	Ծաղկահովիտի միջնակարգ դպրոց	15	9	60.0		Ախուրյանի ավագ դպրոց	39	28	71.8
	Ապարանի ավագ դպրոց	72	43	59.7		Գեղանիստի միջնակարգ դպրոց	10	7	70.0
Արարատ	Մասիսի թիվ 5 ավագ դպրոց	71	69	97.2	Սյունիք	Կապանի թիվ 2 ավագ դպրոց	99	71	71.7
	Արտաշատի ավագ դպրոց	87	83	95.4		Մեղրու թիվ 1 միջնակարգ դպրոց	21	15	71.4
	Արարատի ավագ դպրոց	87	61	70.1		Կապանի թիվ 9 ավագ դպրոց	82	57	69.5
	Նշավանի միջնակարգ դպրոց	12	8	66.7		Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց	26	16	61.5
	Նոր Խարբերդի թիվ 2 միջնակարգ դպրոց	36	23	63.9		Սիսիանի ավագ դպրոց	112	68	60.7

Արմավիր	Արմավիրի թիվ 4 ավագ դպրոց	66	65	98.5
	Վաղարշապատի թիվ 2 ավագ դպրոց	96	83	86.5
	Ամբերդի միջնակարգ դպրոց	11	7	63.6
	Արմավիրի միջնակարգ դպրոց	16	10	62.5
	Քարակերտի թիվ 2 միջնակարգ դպրոց	13	8	61.5
Գեղարքունիք	Զովաբերի միջնակարգ դպրոց	13	10	76.9
	Գավառի ավագ դպրոց	64	44	68.8
	Խաչաղբյուրի միջնակարգ դպրոց	12	8	66.7
	Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց	96	58	60.4
	Մարտունու ավագ դպրոց	85	51	60.0
Լոռի	Վանաձորի մաթեմ. և բնագ. առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց	39	35	89.7
	Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց	91	80	87.9
	Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոց	26	16	61.5
	Ալավերդու թիվ 5 ավագ դպրոց	38	23	60.5
	Ստեփանավանի ավագ դպրոց	30	18	60.0

Վայոց ձոր	Վայքի ավագ դպրոց	58	31	53.4
	Եղեգնաձորի ավագ դպրոց	76	33	43.4
	Ագարակաձորի միջնակարգ դպրոց	10	4	40.0
	Ջերմուկի կրթահամալիր	43	17	39.5
	Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոց	15	5	33.3
Տավուշ	Իջևանի ավագ դպրոց	132	90	68.2
	Կողբի թիվ 1 միջնակարգ դպրոց	17	11	64.7
	Կայանավանի միջնակարգ դպրոց	12	7	58.3
	Բերդի ավագ դպրոց	42	24	57.1
	Կոթիի միջնակարգ դպրոց	14	8	57.1

Բարձր պատրաստվածություն ունեցած շրջանավարտների մի մասը, որոնք բուհերի ընդունելության մրցույթի ցանկում ընդգրկված որևէ բուհ չեն ընդունվել, հնարավոր է, որ ընդունվել են այդ ցանկում չընդգրկված այլ բուհեր:

5.4 ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԵՎ ԲԱՐՁՐԼԵՌՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԵՐԻՑ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ԱՌԱՆՁՆԱՑԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԸ

2022 թվականին ՀՀ սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերից բուհերում հայտագրվել է 908 դիմորդ, որոնցից ընդունվել է 604-ը (66.5%) (աղյուսակ 17):

Աղյուսակ 17. 2022 թ. դիմորդների թվերը սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերում

Գյուղական բնակավայրի տիպը	Հայտա--գրվածների թիվը	Ընդունվածների	
		թիվը	տոկոսը
Սահմանամերձ	514	341	66.3
Բարձրլեռնային	388	262	67.5
Բարձրլեռնային սահմանամերձ	6	1	16.7
Ընդամենը	**908**	**604**	**66.5**

Աղյուսակ 18-ում և աղյուսակ 19-ում ըստ վարչատարածքային միավորների ներկայացված են սահմանամերձ և բարձրլեռնային գյուղերի՝ 2022 թ. բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած դպրոցները: Ուսումնասիրվել են հինգից մինչև տասը շրջանավարտ ունեցած և ընդունվածների մեծ թիվ ապահոված դպրոցները:

Աղյուսակ 18. 2022 թ. սահմանամերձ գյուղերի հինգից մինչև տասը շրջանավարտ ունեցած և բուհ ընդունվածների՝ 50-ից բարձր տոկոսով առանձնացած դպրոցները

Մարզը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտ-ների թիվը	Բուհ ընդունվածների			
			թիվը	տոկոսը	այդ թվում՝ 1-ին հայտով անվճար ընդունվածների	
					թիվը	տոկոսը՝ ընդուն-վածների թվից
Շիրակ	Բագրավանի միջնակարգ դպրոց	6	5	83.3		
	Շիրակավանի միջնակարգ դպրոց	6	3	50.0		
Տավուշ	Ջուջևանի միջնակարգ դպրոց	6	3	50.0		
Սյունիք	Սյունիքի միջնակարգ դպրոց	6	3	50.0		
Արարատ	Զանգակատան միջնակարգ դպրոց	9	5	55.6	1	20.0

Աղյուսակ 18-ում ներկայացված դպրոցներից բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Շիրակի մարզի Բագրավանի միջնակարգ դպրոցում (83.3%՝ 6 շրջանավարտներից ընդունվել են 5-ը): Բուհ ընդունվածների ամենամեծ թիվը ևս արձանագրվել է Բագրավանի, ինչպես նաև Արարատի մարզի Զանգակատան միջնակարգ դպրոցներում (համապատասխանաբար, 6 շրջանավարտից՝ 5-ը և 9 շրջանավարտից՝ 5-ը): Աղյուսակում ընդգրկված հինգ դպրոցներից առաջին հայտով անվճար ընդունված շրջանավարտ է ունեցել միայն Ագարակի մարզի Զանգակատան միջնակարգ դպրոցը:

Աղյուսակ 19. 2022 թ. բարձրլեռնային գյուղերի հինգից մինչև տասը շրջանավարտ ունեցած և բուհ ընդունվածների՝ 50-ից բարձր տոկոսով առանձնացած պրոցները

Մարզը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների			
			թիվը	տոկոսը	այդ թվում՝ անվճար ընդունվածների	
					թիվը	տոկոսը՝ ընդունվածների թվից
Արագածոտն	Գեղադիրի միջնակարգ դպրոց	8	6	75.0		
	Լուսագյուղի միջնակարգ դպրոց	5	3	60.0	1	33.3
	Եղիպատրուշի միջնակարգ դպրոց	5	3	60.0	1	33.3
Սյունիք	Գորայքի միջնակարգ դպրոց	7	4	57.1	1	25.0

Աղյուսակ 19-ում ներկայացված դպրոցներից բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Արագածոտնի մարզի Գեղադիրի միջնակարգ դպրոցում (75%, 8 շրջանավարտից՝ 6-ը): Ընդունվածների թվով առաջատարը նույնպես եղել է այդ դպրոցը: Առաջին հայտով անվճար ընդունված մեկական շրջանավարտ են ունեցել Արագածոտնի մարզի Լուսագյուղի, Եղիպատրուշի և Սյունիքի մարզի Գորայքի միջնակարգ դպրոցները:

5.5 ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԱՅԻՆ ԿԱԶՄԸ

2022 թ. բուհերում հայտագրված 12996 դիմորդներից 5447-ը (41.9%) եղել են արական սեռի ներկայացուցիչներ, 7549-ը (58.1%)՝ իգական սեռի: Մրցույթի հիմնական և լրացուցիչ փուլերով ընդունված 9729 դիմորդներից 3699-ը (38%) եղել են արական սեռի, 6030-ը (62%)՝ իգական:

Դիագրամ 2. 2022 թ. բուհերում հայտագրված և ընդունված դիմորդների սեռային կազմը



5.6 ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղյուսակ 20-ում ներկայացված են դիմորդների շրջանում 2022 թվականին ՀՀ պետական բուհերի 10 ամենապահանջված մասնագիտությունները:

Աղյուսակ 20. 2022 թ. ամենապահանջված մասնագիտությունների տասնյակը

Բուհը [1]	Մասնագիտությունը	Դիմումների թիվը հիմնական փուլում	Տեղերի թիվը		Ընդունվածների թիվը [2]		Անցողիկ միավորը [3]	
			անվճար	վճարովի	անվճար	վճարովի	անվճար	վճարովի
ԵՊԲՀ	Բուժական գործ	695	61	390	64	393	39.0	27.5
ԵՊՀ	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	307	40	175	44	178	38.0	27.0
ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)	297	11	189	13	189	37.25	23.0
ԵՊՀ	Իրավագիտություն	286	2	138	3	138	40.0	36.25
ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	279	11	189	12	192	37.0	22.75
ԲՊՀ	Սերվիս	248	2	247	2	193	37.5	15.5
ՃՇՀԱՀ	Ճարտարապետություն	238	13	160	13	183	35.21	18.0
ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	237	6	193	6	193	36.0	15.75
ՀՊՏՀ	Տնտեսագիտություն	236	13	187	15	188	34.75	15.0
ԵՊԲՀ	Ստոմատոլոգիա	233	5	130	6	131	39.25	22.5
Ընդամենը		3056	164	1998	178	1978		
			2162		2156			

[1] Երևանում գործող բուհերի տվյալներում ընդգրկված չեն մարզերում գործող մասնաճյուղերի տվյալները:
[2]- Ընդունվածների թիվը որոշ մասնագիտությունների դեպքում մեծ է նախատեսված տեղերի թվից, քանի որ դրանցում ներառված են նաև արտոնություններով և ԿԳՄՄՆ ավելացրած տեղերով (հավասար միավորների դեպքում) ընդունվածների թվերը:
[3] Անցողիկ միավորներում ներառված չեն արտոնություններով ընդունվածների ցուցանիշները:

Աղյուսակ 20-ում երևում է, որ 2022 թվականին ամենապահանջված 10 մասնագիտություններն ընտրել է 12996 դիմորդներից 3056-ը (23.5%): Այդ մասնագիտություններից դիմումների թվով առաջատարը եղել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը, որն ընտրել է 695 դիմորդ: Երկրորդ և երրորդ տեղերում եղել են ԵՊՀ-ի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և ՀՊՏՀ-ի «Կառավարում» մասնագիտությունները: Առաջատար երեք մասնագիտությունները հայտագրած դիմորդները կազմել են բոլոր

բուհերում հայտագրվածների 10%-ը և ամենապահանջված մասնագիտությունների տասնյակն ընտրած դիմորդների 42.5%-ը:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են 2022 թվականին ՀՀ վարչատարածքային միավորների դիմորդների շրջանում ամենապահանջված մասնագիտությունների հնգյակները: Տոկոսները հաշվարկված են տվյալ վարչատարածքային միավորի համապատասխան ընդհանուր ցուցանիշներից:

Աղյուսակ 21. 2022 թ. ամենապահանջված մասնագիտությունների հնգյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Բուհը	Մասնագիտությունը		Հայտագրվածների թիվը հիմնական փուլում	Ընդունվածների թիվը	դրա թվում՝ անվճար առաջին հերթով
Երևան					
ԵՊԲՀ	Բուժական գործ		278	167	26
ՃՇՀԱՀ	Ճարտարապետություն		158	135	11
ԵՊՀ	Իրավագիտություն		131	74	1
ԵՊՀ	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա		128	96	21
ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)		101	59	2
Ընդամենը՝ հնգյակում		թիվը	796	531	61
		տոկոսը	17.8	15.7	9.6
Երևանի դիմորդների ընդհանուր թիվը			**4470**	**3391**	**635**
Արագածոտն					
ԵՊԲՀ	Բուժական գործ		22	14	1
ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)		22	18	
ԲՊՀ	Սերվիս		19	11	
ՀՖԿՍՊԻ	Մասնագիտական մանկավարժություն-Փրկարարական գործ		19	18	2
ՀԱՊՀ	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա		14	5	
Ընդամենը՝ հնգյակում		թիվը	96	66	3
		տոկոսը	17.1	16.7	7.0
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը			**563**	**396**	**43**
Արարատ					
ԵՊԲՀ	Բուժական գործ		41	27	5
ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)		34	27	2
ԵՊՀ	Իրավագիտություն		27	19	
ԵՊԲՀ	Ստոմատոլոգիա		21	15	
ՀԱՊՀ	Տնտեսագիտություն		21	10	
Ընդամենը՝ հնգյակում		թիվը	144	98	7
		տոկոսը	15.0	13.4	6.0
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը			**961**	**733**	**116**

Արմավիր					
ԵՊԲՀ	Բուժական գործ		37	27	5
ԵՊԼՀ	Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն լեզուներ		34	32	1
ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)		31	18	1
ԵՊՀ	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա		28	20	3
ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)		27	20	
Ընդամենը՝ հնգյակում		թիվը	157	117	10
		տոկոսը	16.6	17.2	12.2
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը			**948**	**682**	**82**
Գեղարքունիք					
ԵՊԲՀ	Բուժական գործ		54	38	4
ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)		28	15	
ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)		22	13	1
ՀՊՏՀ	Տնտեսագիտություն		19	15	
ԵՊՀ	Իրավագիտություն		19	5	
Ընդամենը՝ հնգյակում		թիվը	142	86	5
		տոկոսը	17.5	14.7	5.4
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը			**812**	**586**	**93**
Լոռի					
ՎՊՀ (Վանաձոր)	Անգլերեն լեզու և գրականություն		51	45	5
ԵՊԲՀ	Բուժական գործ		49	38	3
ՎՊՀ (Վանաձոր)	Կառավարում (ըստ ոլորտի)		48	36	3
ՀԱՊՀ (Վանաձոր)	Տնտեսագիտություն		35	21	1
ՎՊՀ (Վանաձոր)	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ		32	6	3
Ընդամենը՝ հնգյակում		թիվը	215	146	15
		տոկոսը	23.0	21.3	10.3
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը			**936**	**687**	**146**
Կոտայք					
ԵՊԲՀ	Բուժական գործ		50	43	8
ԲՊՀ	Սերվիս		40	36	
ՀՊՏՀ	Շուկայագիտություն (մարքեթինգ) /ըստ ոլորտի/		36	24	1
ՀՊՏՀ	Տնտեսագիտություն		33	26	4
ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)		31	27	1
Ընդամենը՝ հնգյակում		թիվը	190	156	14
		տոկոսը	16.5	17.1	8.8
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը			**1152**	**911**	**160**
Շիրակ					
ԵՊԲՀ	Բուժական գործ		82	58	11
ՀՊՏՀ (Գյումրի)	Ֆինանսներ (ըստ ոլորտի)		55	42	5
ՀՊՏՀ (Գյումրի)	Կառավարում (ըստ ոլորտի)		48	36	4
ՇՊՀ	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ		32	24	6
ՇՊՀ	Հոգեբանություն		31	14	6

Ընդամենը՝ հնգյակում		թիվը	248	174	32
		տոկոսը	22.0	19.7	15.0
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը			**1128**	**883**	**214**
Սյունիք					
ԵՊԲՀ	Բուժական գործ		29	28	1
ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)		19	15	1
ԵՊԼՀ	Սերվիս		19	15	
ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)		19	18	4
ԳՊՀ (Գորիս)	Անգլերեն լեզու և գրականություն		16	11	2
Ընդամենը՝ հնգյակում		թիվը	102	87	8
		տոկոսը	16.1	18.8	7.6
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը			**633**	**463**	**105**
Վայոց ձոր					
ԵՊԲՀ	Բուժական գործ		10	9	1
ՀՊՏՀ	Կառավարում (ըստ ոլորտի)		9	6	
ՀՊՏՀ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)		8	2	
ՃՇՀԱՀ	Ճարտարապետություն		7	5	
ՀՊՏՀ	Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)		7	4	
Ընդամենը՝ հնգյակում		թիվը	41	26	1
		տոկոսը	18.6	17.0	4.5
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը			**221**	**153**	**22**
Տավուշ					
ԵՊՀ ԻՄ	Ֆինանսներ (ըստ ոլորտի)		46	30	5
ԵՊՀ ԻՄ	Պատմություն		31	18	3
ԵՊՀ ԻՄ	Անգլերեն լեզու և գրականություն		28	25	4
ԵՊՀ ԻՄ	Զբոսաշրջություն		23	13	3
ԵՊՀ ԻՄ	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա		23	18	7
Ընդամենը՝ հնգյակում		թիվը	151	104	22
		տոկոսը	22.4	21.7	32.4
Մարզի դիմորդների ընդհանուր թիվը			**673**	**479**	**68**

Աղյուսակ 21-ում տեսնում ենք, որ բացի Լոռու և Տավուշի մարզերից, մնացած բոլոր վարչատարածքային միավորներում ամենապահանջվածը 2022 թվականին եղել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը: Դիտարկված մասնագիտությունների հնգյակներում արձանագրված հաճախադեպությամբ աչքի են ընկել «Կառավարում», «Ֆինանսներ», «Տնտեսագիտություն» ու «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունները:

Աղյուսակում ըստ նշված մասնագիտությունների ներկայացվել են նաև հայտագրվածների, ընդունվածների, ինչպես նաև առաջին անվճար հայտով (հիմնական և լրացուցիչ փուլերի) ընդունվածների գումարային ցուցանիշները և դրանց տոկոսները՝ հաշվարկած տվյալ վարչատարածքային միավորի համապատասխան ընդհանուր ցուցանիշներից: Այդ առումով ամենապահանջված մասնագիտություններ հայտագրած դիմորդների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Լոռու մարզում (մարզից

հայտագրվածների 23%-ը), հայտագրվածների և ընդունվածների ամենացածր տոկոսներն՝ Արարատի մարզում (համապատասխանաբար՝ 15% և 13.4%): Պահանջված մասնագիտություններով բուհ ընդունվածների ամենաբարձր տոկոսով աչքի է ընկել Տավուշի մարզը (21.7%): Դիտարկված մասնագիտությունների առաջին անվճար հայտերով ընդունվածների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Տավուշի (32.4%), ամենացածրը՝ Վայոց ձորի (4.5%) մարզերում:

ԱՄՓՈՓՈՒՄ

2022 թ. dimord.am կայքում միասնական և ներբուհական քննություններ է հայտագրել 13887 դիմորդ: Նրանցից 11685-ը դիմում-հայտում նշել են միասնական, 2202-ը՝ ներբուհական քննություններ: Ներբուհական քննություն հայտագրածներից 74-ի ընտրած մասնագիտությունների ընդունելության համար պահանջվել է մեկ ներբուհական և մեկ միասնական քննություն: 899 դիմորդ՝ բոլոր հայտագրվածների 6.5%-ը, բուհ և մասնագիտություն չի նշել:

➢ ***Միասնական քննություններ:*** 2022 թ. առնվազն մեկ միասնական քննություն է հայտագրել 11759 դիմորդ: Նախորդ տարվա համեմատությամբ հայտագրվածների թիվը նվազել է 160-ով:

Միասնական քննություններն անցկացվել են երկու փուլով. հայտագրման առաջին փուլում դիմում-հայտ է լրացրել 11565 դիմորդ, երկրորդ փուլում՝ 194: Երկրորդ փուլում հայտագրվածներից 61-ը հայտագրված են եղել նաև առաջին փուլում:

Հայտագրված դիմորդներից 12863-ը եղել են Հայաստանի, 694-ը՝ Արցախի, 229-ը՝ Ռուսաստանի, 73-ը՝ Վրաստանի, 28-ը՝ այլ երկրների քաղաքացիներ:

Հայտագրված 13887 դիմորդներից 2021-2022 ուսումնական տարվա շրջանավարտներ են եղել 13100-ը (առնվազն մեկ միասնական քննություն հայտագրածները՝ 11234-ը):

Միասնական քննություններից բացակայությունները չեն գերազանցել մասնակիցների թվի 7.1%-ը: Քննության անցկացման կարգի խախտման պատճառով քննությունից հեռացվել է 9 դիմորդ, հիվանդության պատճառով քննությունն ընդհատել է 34 դիմորդ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների միասնական քննությունների ընդհանուր միջին միավորները բաշխվել են 11-ից (մաթեմատիկա և ռուսաց լեզու) մինչև 14.7 (գերմաներեն) սահմաններում: Նախորդ տարվա համեմատությամբ 0.2-ից (քիմիա) մինչև 1.9 միավորով (հայոց պատմություն) նվազել են բոլոր քննությունների միջին միավորները, բացի մաթեմատիկայից և գերմաներենից, որոնց միջին միավորներն ավելացել են, համապատասխանաբար, 0.6-ով և 0.9-ով: Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների թիվը 2022 թվականին եղել է մասնակիցների թվի 9.2-28.4 տոկոսի սահմաններում: 10 տոկոսից պակաս են եղել աշխարհագրության, գերմաներենի և ֆրանսերենի համապատասխան ցուցանիշները:

Միասնական քննություններից 18-20 միավոր հավաքած դիմորդների թիվը եղել է մասնակիցների թվի 1.5-ից (ռուսաց լեզու) մինչև 37.2 (գերմաներեն) տոկոսի սահմաններում: Ամենամեծաքանակ բարձր միավորներն արձանագրվել են անգլերենից (թվով 1133՝ 20.3 տոկոսը):

Միասնական քննությունների վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորներն արձանագրվել են Արագածոտնի (ֆրանսերենից՝ 15.0), Արարատի (անգլերենից՝ 14.3 և հայոց պատմությունից՝ 14.3), Արմավիրի (աշխարհագրությունից՝ 14.2), Կոտայքի (մաթեմատիկայից՝ 11.8, քիմիայից՝ 14.6, հայոց լեզվից և հայ գրականությունից՝ 12.8), Շիրակի (ռուսաց լեզվից՝ 12.4 և գերմաներենից՝ 16.6), Սյունիքի (կենսաբանությունից՝ 13.8) և Տավուշի (ֆիզիկայից՝ 13.6) մարզերում:

Բնակավայրերի տիպերից միասնական քննությունների վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորներով աչքի են ընկել հատկապես միջին և փոքր քաղաքները (մաթեմատիկայից, հայոց լեզվից և հայ գրականությունից, հայոց պատմությունից, կենսաբանությունից, քիմիայից, գերմաներենից և ռուսաց լեզվից):

Հանրակրթական ուսումնական հաստատություններից 2022 թվականին վիճակագրորեն նշանակալի ամենաբարձր միջին միավորներն ունեցել են առավելապես վարժարանների (մաթեմատիկայից, կենսաբանությունից, ֆիզիկայից և գերմաներենից) և կրթահամալիրների (անգլերենից, հայոց լեզվից և հայ գրականությունից, հայոց պատմությունից, քիմիայից և ֆրանսերենից) շրջանավարտ դիմորդները:

➢ ***Բուհերի ընդունելության մրցույթը:*** 2022 թ. ՀՀ բուհերի՝ ԳԹԿ-ի կողմից կազմակերպված ընդունելության մրցույթի համար նախատեսված է եղել անվճար հիմունքներով ուսուցման 1933 տեղ, վճարովի հիմունքներով՝ 21802:

Բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու նպատակով dimord.am կայքում հայտագրվել է 12996 դիմորդ: Պարտադիր երկու քննություններից առնվազն մեկ միասնական քննություն պահանջող մասնագիտություն է հայտագրել 10856 (83.5%) դիմորդ, առնվազն մեկ ներբուհական քննություն պահանջող՝ 2128-ը (16.4%): 12 դիմորդ (0.1%) քննություն է հայտագրել օտարերկրյա ռազմական հաստատություն ընդունվելու նպատակով: Դիմորդներից 280-ը (մասնագիտություն հայտագրածների 2.2%-ը) դիմել են ոչ պետական բուհեր:

Բուհերի ընդունելության մրցույթը կազմակերպվել է երկու փուլով: Միասնական և ներբուհական քննություններ հայտագրած 13887 դիմորդներից ընդունվել է 9729-ը (74.9%): Նրանցից 8974-ն (ընդունվածների 92.2%-ը) ընդունվել է մրցույթի առաջին փուլում, 755-ը (7.8%)՝ երկրորդում: Պետական բուհեր է ընդունվել 9598 դիմորդ (ընդունվածների 98.7%-ը), ոչ պետական բուհեր՝ 131-ը (1.3%):

Երկու միասնական քննությունների արդյունքներով բուհ է ընդունվել 7943 դիմորդ (81.6%) երկու ներբուհական քննությունների արդյունքներով՝ 1767-ը (18.2%), մեկ միասնական և մեկ ներբուհական քննությունների արդյունքներով՝ 19-ը (0.2%):

Միասնական և ներբուհական քննությունների արդյունքներով ընդունված 9729 դիմորդներից ուսուցման անվճար հիմունքներով ընդունվել է 1797-ը (1738-ը՝ առաջին

փուլում, 59-ը՝ երկրորդում), վճարովի հիմունքներով՝ 7932-ը (7236-ը՝ առաջին փուլում, 696-ը՝ երկրորդում)։ Նրանցից 101-ն ընդունվել է պահուստային տեղերով (արտոնություններով), 12-ը՝ նպատակային պետական անվճար տեղերով։

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող հիմնական առարկաներից բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու գծով մանկավարժի որակավորում շնորհող բուհերում առաջին հայտով հայտագրված դիմորդները կազմել են բուհ և մասնագիտություն հայտագրած դիմորդների 3.4 տոկոսը (447 դիմորդ)։

2022 թվականին տասը և ավելի շրջանավարտներ ունեցած ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից բուհ ընդունվածների բարձր տոկոս ապահովածների լավագույն տասնյակում տեղ են գտել 81.5-98.5% արձանագրածները, որոնցից առաջատարը եղել է Արմավիրի թիվ 4 ավագ դպրոցը (97.6%)։ Բուհ ընդունվածների ամենամեծ թիվն այդ ցանկում ապահովել է Երևանի թիվ 190 ավագ դպրոցը, որի 255 շրջանավարտներից ընդունվել են 233-ը (91.4%)։

Սահմանամերձ գյուղերում 2022 թ. հինգից մինչև տասը շրջանավարտ ունեցած և բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առաջատար դպրոցը եղել է Շիրակի մարզի Բագրավանի միջնակարգ դպրոցը (83.3%), իսկ բարձր լեռնային գյուղերում՝ Արագածոտնի մարզի Գեղադիրի միջնակարգ դպրոցը (75%)։

2022 թվականին դիմորդների նախընտրած մասնագիտություններից ամենապահանջվածների տասնյակը գլխավորել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը։ Երկրորդը և երրորդը եղել են ԵՊՀ-ի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և ՀՊՏՀ-ի «Կառավարում» մասնագիտությունները։ Առաջատար երեք մասնագիտությունները հայտագրած դիմորդները կազմել են բոլոր բուհերում հայտագրվածների 10%-ը և ամենապահանջված մասնագիտությունների տասնյակն ընտրած դիմորդների 42.5%-ը։

2022 թ. Երևանում և մարզերում ամենապահանջված մասնագիտությունը եղել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը, որի հետ առաջին երեք տեղերը զբաղեցրել են հիմնականում «Կառավարում», «Ֆինանսներ», «Տնտեսագիտություն» և «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունները։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. 2022 թ. միասնական քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներ
2. ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ
3. 2021 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների վիճակագրական վերլուծություն
4. 2022/2023 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և վճարովի, առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության տեղերի ցանկ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Դիմորդների ընտրած մասնագիտության և տվյալ մասնագիտության համար սահմանված քննությունների առցանց հայտագրումը սկսվել է 2022 թ. ապրիլի 15-ից և ավարտվել մայիսի 10-ին՝ մինչև ժամը 18:00-ն (համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերի) կարգի»):

Դիմորդները դիմում-հայտում լրացրել են մասնագիտությունների և ընդունելության քննությունների՝ ցանկով նախատեսված մեկ բուհի և մեկ մասնագիտության անվանումը, տվյալ մասնագիտությամբ սովորելու համար պահանջվող ընդունելության քննությունները: «Ընդունելության քննություններ» բաժնի այունակում միասնական քննությունների առարկաները «կամ» բառով տարանջատված լինելու դեպքում դիմորդներին թույլատրվել է ընտրել նշված քննություններից մեկը:

Դիմում-հայտերի տվյալների վերջնական մուտքագրումից հետո ԳԹԿ-ն պատրաստել է դիմորդների ցուցակները՝ ըստ քննական առարկաների և կենտրոնների, որոնց հիման վրա դիմորդներին տրվել են միասնական քննությունների անցաթղթեր: Դրանք ԳԹԿ-ն մինչև մայիսի 30-ն ուղարկել է դպրոցներ, էլեկտրոնային եղանակով ուղարկվել է նաև դիմորդներին:

ՀՀ երկքաղաքացիների և օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացիների, առաջին փուլում ընդունելության դիմում-հայտ չներկայացրած ՀՀ քաղաքացիների, տվյալ տարվա գարնանային զորակոչից զորացրված կամ մինչև հուլիսի 31-ը զորացրվող դիմորդների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվել են հունիսի 26-ից մինչև հուլիսի 1-ը՝ մինչև ժամը 17:00-ը:

Միասնական քննությունները կազմակերպվել և անցկացվել են քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև 2022 թ. մայիսի 15-ը հաստատել է ԳԹԿ-ի տնօրենը: Քննությունների անցկացման գործընթացին մասնակցել են քննական կենտրոնի ղեկավարը, ԳԹԿ-ի ներկայացուցիչները, քննության ընթացքի կազմակերպիչները, համակարգչային օպերատորը, քննական կենտրոնի հերթապահը, որոնք իրենց աշխատանքը քննությունների ընթացքում իրականացրել են ԳԹԿ-ի տնօրենի կողմից հաստատված աշխատակարգերի համաձայն:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. 2022 Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ	ՏԵՎՈ-ՂՈՒԹՅՈՒՆԸ (ժամ)	ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ	
		Հիմնական փուլ	Լրացուցիչ փուլ
Կենսաբանություն Աշխարհագրություն	3	07.06.2022 թ.	04.07.2022 թ.
Օտար լեզուներ	2.5	10.06.2022 թ.	05.07.2022 թ.
Հայոց լեզու և հայ գրականություն	3	14.06.2022 թ.	06.07.2022 թ.
Մաթեմատիկա	3	17.06.2022 թ.	07.07.2022 թ.
Հայոց պատմություն Ֆիզիկա	3	21.06.2022 թ.	08.07.2022 թ.
Քիմիա Ռուսաց լեզու	3 2.5	24.06.2022 թ.	09.07.2022 թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ [6]

Համաձայն Գնահատման և թեստավորման կենտրոնի գործունեության պլանի՝ ԳԹԿ-ն 2022 թ. ապրիլի 1-ից սկսած առնվազն հինգ անգամ ԶԼՄ-ներով պարբերաբար հրապարակել է հայտարարություն, որում նշվել են միասնական քննությունների և բուհերի ընդունելության դիմում-հայտերի առցանց գրանցումն սկսելու և ավարտելու ժամկետները, նախորդ տարիների շրջանավարտներին ԳԹԿ անձնական համար տրամադրող և գրանցող հանրակրթական ուսումնական հաստատությունները: ԳԹԿ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում տեղադրվել և պարբերաբար թարմացվել են միասնական քննություններին և բուհերի ընդունելության մրցույթին վերաբերող տեղեկությունները:

ԳԹԿ համակարգչային և վերլուծական բաժինը հանրակրթական ուսումնական հաստատությունների համակարգչային օպերատորների համար կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ:

Միասնական քննությունների կազմակերպման գործընթացը (ուղեցույցների մշակում և տրամադրում, միասնական քննությունների և բուհերի ընդունելության հայտագրում, թեստերի տպագրություն) լուսաբանվել է ԶԼՄ-ներով: Քննությունների անցկացման ողջ գործընթացը բաց է եղել լրատվամիջոցների համար: Այդ թեմայով պարբերաբար կազմակերպվել են հարցազրույցներ և ասուլիսներ:

[6] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151376

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Միասնական քննությունների թեստերը կազմված են լինում պատասխանի ընտրությամբ և կարճ պատասխանով առաջադրանքներից, առարկաների մի մասի դեպքում՝ պնդումների փնջերից:

Պատասխանի ընտրությամբ առաջադրանքներում պատասխանի չորս հնարավոր տարբերակներից ճիշտ է միայն մեկը:

Կարճ պատասխանով առաջադրանքների երկու տիպերից մեկի դեպքում պատասխանը մեկ թիվ է կամ մի քանի թվեր, որոնց հաջորդականությունը պահպանելը պարտադիր է: Մյուս տիպի դեպքում թվային հաջորդականության պահպանումը պարտադիր չէ:

Պնդումների փունջը կազմվում է վեց պնդումներից, որոնցից յուրաքանչյուրի հնարավոր պատասխաններն են՝ «Ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ», և դրանցից պետք է ընտրել միայն մեկը:

Բոլոր թեստերի առավելագույն միավորը 80 է: Գնահատման 80 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվում է՝

$$Մ=0.25 * Մ_{80}$$

բանաձևով, որտեղ Մ-ն միավորն է 20 միավորանոց սանդղակում, $Մ_{80}$-ը՝ 80 միավորանոց սանդղակում:

20 միավորանոց սանդղակում դրական են համարվում 7.5 և ավելի միավորները:

Բոլոր թեստերում ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար ըստ գնահատման 20 միավորանոց սանդղակի տրվում է 0.25 միավոր (ըստ 80 միավորանոց սանդղակի՝ 1 միավոր):

Պնդումների փնջերի յուրաքանչյուր պնդման ճիշտ պատասխանի համար գնահատման 20 միավորանոց սանդղակում տրվում է 0.25 միավոր, յուրաքանչյուր սխալ պատասխանի դեպքում պնդումների տվյալ փնջին տրվելիք միավորներից հանվում է 0.25 միավոր: «Չգիտեմ» պատասխանի դեպքում միավոր չի տրվում և չի հանվում: Ամբողջ փնջին միավոր չի տրվում նաև պնդումների փնջի միավորների գումարի արդյունքում ստացված բացասական թվի կամ 0-ի դեպքում: Այլ առաջադրանքներից հավաքած միավորների վրա տվյալ փնջի միավորները չեն ազդում:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ 2007-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Տարեթիվը	Հայոց լեզու և հայ գրականություն		Մաթեմատիկա		Անգլերեն		Ռուսաց լեզու		Գերմաներեն		Ֆրանսերեն		Ֆիզիկա		Հայոց պատմություն		Կենսաբանություն		Քիմիա		Համաշխ. պատմություն		Աշխարհագրություն		Իսպաներեն		Իտալերեն		Պարսկերեն	
	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը
2022	5209	11.9	5409	11.0	5577	13.7	341	11.0	94	14.7	65	13.3	1582	11.2	1461	12.7	1646	11.8	1251	12.8			127	12.7	2	12.1	2	19.1		
2021	4115	12.3	5222	10.4	4386	14.5	274	12.2	85	13.8	74	14.7	1369	12.5	1457	14.6	1394	12.5	1146	13	29	13.2	189	14	2	12.1			2	13.5
2020	1712	10.7	5220	10.9	1773	14.7	169	12.3	57	15.5	52	15.7	190	11.6	1570	12	1078	13.1	341	16.2			282	12.4	5	14.1	3	14.5		
2019	5701	11.4	4837	12	4821	13.8	456	11.1	126	13.9	88	15.1	1492	11.5	1443	11.5	1324	13	1100	12.2	41	13.6	244	13.5	4	13.3	1	18.5	5	12
2018	2715	12.2	2553	11.5	2183	14	264	9.6	81	14.9	51	14.9	983	11	726	12.3	685	13.5	584	12.4	41	12.2	148	13.1	2	13.25			1	13.75
2017	5307	12.9	4586	11.3	4158	14.4	544	10.2	119	15.6	126	15.6	1683	11.5	1331	12.1	1265	13.4	1098	12.7	90	14.7	282	12.1	6	14.3	2	17.1		
2016	6336	13.7	5400	11.6	4833	14.1	652	9.8	192	15.3	173	15.9	1947	11.4	1440	13.3	1449	12.9	1183	12.9	134	14.4	356	13.5	10	16.2	3	15.1		
2015	6991	13.7	5567	11.8	5243	14.2	781	10	230	14.9	194	15.3	1957	10.9	1673	13	1527	12.6	1194	12.6	133	13.3	332	13.8	13	12.4	1	18.75		
2014	7602	13.2	6062	11.6	5441	13.9	910	10.6	284	14	230	15.8	2208	11.4	1906	12.9	1466	10.9	1143	12.4	141	12.6	317	13.4	15	16.5	2	18.6	1	7
2013	8931	13.1	6912	11.8	6361	15.4	1212	11	362	15.6	293	16.2	2489	11.5	2354	13.4	1788	14.1	1368	12.6	224	11.5	346	14.4	19	18.8	5	14.8	1	19.25
2012	11671	13.9	8831	11.6	7982	13.2	1242	10.3	525	14.4	438	14.3	3328	12.1	3126	10	1960	11.4	1537	10.8	384	12.2	387	12.3	24	17.9	4	15.4	5	16.4
2011	1326	11.4	1077	6.1	776	9.5	202	10.9	78	9.5	38	11.2	474	5.3	524	10.5	360	10.3	251	9.1	107	10.6	52	10.9	5	15.2	1	19.75		
2010	11152	11.4	9218	9.9	7712	13.3	989	11.2	528	13.9	432	14.6	4066	10.3	3313	11.3	1774	10.9	1336	12	543	13.1	325	11.5	18	14.8	4	16.8	2	14.8
2009	12378	11.4	9955	10.8	8066	13.9	1218	12.3	531	14.5	435	16.5	4677	10.1	3394	13.3	1799	11.7	1314	12	552	12	394	13	18	16.9	10	15.7	2	16.9
2008	13814	13	9859	14.9	7848	14.9	1529	16	575	14.7	514	16.6													23	18.9	4	18.7		
2007	14862	15.1																												